

# ՄԱՆԿԱԲՈՒԺԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ISSN 1829-3123



8  
2012



• Ռախիտ • Քեպատիտներ • Քերպես • Էնտերոբիոզ

## Մանկաբուժական լրատու 8, 2012

### Առաքելությունը.

Ծանոթացնել բուժաշխատողներին առաջատար ամսագրերում հրատարակված, ապացուցողական բժշկությամբ հիմնավորված և գործնական նշանակություն ունեցող մանկաբուժական նյութերին:

### Բովանդակությունը

Վիտամին D դեֆիցիտային ռախիտ	1-12 էջ	Հրաչուիի Ղազարյան
Նեպատիտներ. Շիմնական դրույթներ	13-25 էջ	Լյուդմիլա Եպիսկոպոսյան Քողվածք լուսցել և վերամշակվել է խմբագիրների կողմից
Պարզ հերպես	26-32 էջ	Արմեն Միհրանյան
Էնտերոբիոզ	33-36 էջ	Լիլիթ Մարտիրյան
Պատոախաններ.		Սույն հրատարակությունը իրականացվել է ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության (ՄԶԳ) և Վորլդ Վիժն ԱՄՆ-ի կողմից ֆինանսավորվող «Առողջություն ընտանիքների համար» ծրագրի շրջանակներում: Յեղինակների տեսակետները պարտադիր չեն, որ համընկնեն ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության և ԱՄՆ-ի կառավարության կարծիքի հետ:
1-Ղ, 2-Ա, 3-Գ, 4-Գ, 5 -Բ, 6-Ղ, 7-Ղ, 8-Ղ, 9-Գ, 10-Բ, 11-Գ, 12-Գ, 13-Բ, 14-Ղ, 15-Ա, 16-Ղ, 17-Գ, 18-Ղ, 19-Բ, 20-Ղ, 21-Գ, 22-Ա, 23-Ղ, 24-Բ, 25-Բ, 26-Ա, 27-Գ		Նախատեսված չէ վաճառքի համար:

Գլխավոր խմբագիր՝  
Կոստանդին Տեր-Ռոկանյան

Խմբագիր՝  
Հրաչուիի Ղազարյան

Խմբագրական խորհուրդ՝

Անահիտ Ղազարյան  
Հովհաննես Ղազարյան  
Հրաչուիի Ղազարյան  
Արմեն Միհրանյան  
Ոութեն Զամայան  
Կոստանդին Տեր-Ռոկանյան

Էջադրող՝ Այսոնա Վարդանյան

Զեկուրող՝ Հեղնար Պետրոսյան

Նյութերը պատրաստեցին

Սույն հրատարակությունը իրականացվել է ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության (ՄԶԳ) և Վորլդ Վիժն ԱՄՆ-ի կողմից ֆինանսավորվող «Առողջություն ընտանիքների համար» ծրագրի շրջանակներում: Յեղինակների տեսակետները պարտադիր չեն, որ համընկնեն ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության և ԱՄՆ-ի կառավարության կարծիքի հետ:

Նախատեսված չէ վաճառքի համար:

Շապիկի նկարը՝ հեղ. Հարություն Կալենց

# ՎԻՏԱՄԻՆ D ԴԵՖԻՑԻՏԱՅԻՆ ՌԱԽԻՏ

## Նախաբան

Վիտամին D դեֆիցիտային ռախիտը կանխարգելելի հիվանդություն է: Այն առաջանում է օրգանիզմում կալցիումի և/կամ վիտամին D-ի անբավարար քանակության հետևանքով:

Չնայած ռախիտն առավել հաճախ հանդիպում է 3-ից 18 ամսական երեխաների շրջանում, այն կարող է դրսևորվել ոչ միայն կրծքահասակ և վաղ մանկական տարիքի երեխաների, այլ նաև դեռահասների մոտ:

Վիտամին D-ի պակասը ներարգանդային կյանքում և մանկության ընթացքում կարող է բերել աճի դանդաղեցման և կմախքային դեֆորմացիաների առաջացման, ինչպես նաև բարձրացնել հետազայում ազդու կոտրվածքների վտանգը:

Ուսկրերի նորմալ աճը և հանքայնացումը պահանջում են ոսկրի կառուցվածքային տարրեր կազմող կալցիումի և ֆոսֆորի համապատասխան քանակներ: Ուսկրերի անբավարար հանքայնացումը կարող է հանգեցնել ռախիտի և/կամ օստեոնալացիայի առաջացման: Ռախիտի ժամանակ տեղի է ունենում աճման գոտիների անբավարար հանքայնացում, մինչդեռ օստեոնալացիայի ժամանակ դիտվում է ոսկրանյութի հանքայնացման խանգարում: Քանի դեռ աճման գոտիները բաց են, ռախիտը և օստեոնալացիան դրսևորվում են միաժամանակ, իսկ աճի գոտիների փակվելուց հետո առաջանում է միայն օստեոնալացիա:

Այսախով, ռախիտը սահմանվում է որպես ոսկրի աճման գոտիների զարգացման և հանքայնացման ընդհատում: Օստեոնալացիան հասուն ոսկրերի հանքայնացման խանգարումն է, այն չափահասների ռախիտի համարժեքն է: Երեխաների մոտ օստեոնալացիան ուղեկցում է ռախիտին:

## Վիտամին D-ի աղբյուրները և նյութափոխանակությունը

Մարդկանց համար վիտամին D-ի աղբյուր են հանդիսանում արևի ճառագայթները, սնունդը և վիտամին D պարունակող դեղա-

միջոցները: Գոյություն ունի վիտամին D-ի երկու բնական ձև՝ վիտամին D<sub>3</sub> (խոլեկալցիֆերոլ) և վիտամին D<sub>2</sub> (էրգոկալցիֆերոլ), որոնք միմյանցից աննշան տարբերվում են քիմիական կառուցվածքի հաշվին: Ուլտրամանուշակագույն Բ ճառագայթների ազդեցությամբ (ալիքի երկարությունը 290-315 նմ) մարդկանց վերնամաշկում և բուն մաշկում լանուլինի 7-դեհիդրոխուլեստերոլի փոխակերպումից առաջանում է խոլեկալցիֆերոլ: Քանի որ նախավիտամին D-ի ավելցուկը քայլավում է արևի ճառագայթներից, արևի երկարատև ազդեցությունը չի բերում վիտամին D-ի տոքսիկ քանակների առաջացման:

Էրգոկալցիֆերոլը սինթեզվում է սնկերի և խմորասնկերի կողմից և օգտագործվում է սննդամթերքի հարստացման նպատակով ու հավելումներում: Քանի որ էրգոկալցիֆերոլը և խոլեկալցիֆերոլը օրգանիզմում անցնում են միևնույն նյութափոխանակային ուղին, հոդվածում երկու ձևերն էլ այսուհետ կանվանվեն վիտամին D:

Օրգանիզմում վիտամին D-ն երկու անգամ ենթարկվում է հիդրօքսիլացման:

Առաջին հիդրօքսիլացումը տեղի է ունենում յարդում, առաջանում է 25-հիդրօքսիվիտամին D (25[OH]D), որի կիսաքայլացման ժամանակը երեք շաբաթ է:

Երկրորդ հիդրօքսիլացումը կատարվում է հիմնականում երիկամներում, 1-ա հիդրօքսիլազ ֆերմենտի ազդեցությամբ: Արդյունքում առաջանում է կենսաբանորեն ակտիվ 1,25 դիհիդրօքսիվիտամին D (1,25[OH]2D), որը կապվում է վիտամին D-ի ռեցեպտորների հետ (ունի կարճ կիսաքայլացման ժամանակ՝ 4 ժամ): Երկրորդ հիդրօքսիլացումը որոշ չափով կատարվում է նաև այլ թիրախ օրգաններում՝ մաշկում և անոթներում, որտեղ 1-ա հիդրօքսիլացումը խթանում է առևտուկրին ու պարակրին ազդակների առաջացումը և պատասխանատու է վիտամին D-ի ոչ կալցեմիկ ազդեցությունների համար, որոնցից են քաղցկեղի, առտոնինուն հիվանդությունների, 2-րդ տիպի դիաբետի, սիրտ-անոթային հիվանդությունների վտանգի նվազեցումը:

1,25 դիհիդրօքսիվիտամին D-ի առաջացումը երիկամներում կարգավորվում է պլազմայի պարագ հորմոնի (ՊՀ), կալցիումի և ֆուֆորի մակարդակներով: Ֆիբրոբլաստների աճի գործոն 23-ը, որն առաջանում է ոսկրերում, բերում է երիկամների և բարակ աղիների բջիջներում նատրիում-ֆոսֆորական փոխադրիչի ակտիվացման և ճնշում է 1,25 դիհիդրօքսիվիտամին D-ի սինթեզը:

Մակավաթիվ սննդատեսակներ՝ առավելապես ճարպոտ ձկները, հարուստ են վիտամին D-ով: Մանկական աղապտացված կաթնախառնուրդները հարստացվում են վիտամին D-ով, որպեսզի վերջինիս քանակը կազմի 400 ՄՄ/Լ-ում: Կրծքի կաթում վիտամին D-ի պարունակությունը տատանվում է 20-78 ՄՄ/Լ և կախված է նայրական 25-հիդրօքսիվիտամին D-ի մակարդակից:

### Վիտամին D-ի անբավարարության և պակասի սահմանումը

Չնայած չկա միասնական կարծիք շիճուկում 25-հիդրօքսիվիտամին D-ի օպտիմալ մակարդակի վերաբերյալ, փորձագետների մեջ մասը վիտամին D-ի անբավարարությունը սահմանում են 25-հիդրօքսիվիտամին D-ի 20 նգ/մլ-ից ցածր արժեքը (50 նմոլ/լ):

Այժմ համարվում է, որ երեխաների մոտ կալցիումի նորմալ ներծծում կան ոսկրերի հանքայնացում ապահովելու համար շիճուկում 25-հիդրօքսիվիտամին D-ի քանակը պետք է գերազանցի 20 նգ/մլ-ը (50 նմոլ/լ):

Դիմնվելով այս տվյալների վրա՝ ներկայումս ընդունված են երեխաների և դեռահասների վիտամին D-ի մակարդակը սահմանող հետևյալ չափանիշները.

- Վիտամին D-ի բավարար քանակ.  $25[\text{OH}]D > 20 \text{ նգ/մլ}$  (50 նմոլ/լ)
- Վիտամին D-ի անբավարարություն.  $25[\text{OH}]D 15-20 \text{ նգ/մլ}$  (37.5-50 նմոլ/լ)
- Վիտամին D-ի պակաս կամ դեֆիցիտ.  $25[\text{OH}]D \leq 15 \text{ նգ/մլ}$  (37.5 նմոլ/լ)

Այս արժեքները հնարավոր է վերանայվեն, եթե ապացուցվի ոչ կալցեմիկ ազդեցությունների համար շիճուկում  $25[\text{OH}]D$ -ի

ավելի բարձր մակարդակների անհրաժեշտությունը:

### Պարոգենեզ

Առանց վիտամին D-ի ազդեցության ներծծում է սննդից ստացված կալցիումի 10-15%-ը և ֆուֆորի մոտավորապես 60%-ը: 1,25 դիհիդրօքսիվիտամին D-ի և վիտամին D-ի ռեցեպտորի փոխազդեցության արդյունքում աղիներից կալցիումի և ֆուֆորի ներծծումը կատարվում է ավելի արդյունավետ՝ հասնելով համապատասխանաբար 30-40% և 80%-ի: Կալցիումի և վիտամին D-ի պակասը ներարգանդային կյանքում և մանկության շրջանում խաթարում է ոսկրերում կալցիումի նստեցումը: Եթե օրգանիզմում վիտամին D-ի քանակը բավարար չէ, աղիներից կալցիումի ներծծումը նվազում է՝ բերելով շիճուկում կալցիումի քանակի իջեցման:

1,25 դիհիդրօքսիվիտամին D-ի մակարդակի նվազմանը զուգահեռ շիճուկում կալցիումի մակարդակի վերականգնման համար բարձրանում է ՊՀ-ի քանակը և առաջանում է երկրորդային հիպերպարաբիրությանը: Այն բերում է ֆուֆատուրիայի և շիճուկում ֆուֆորի քանակի նվազեցման: Բացի այդ, ՊՀ-ը բարձրացնում է 1-ա հիդրօքսիլազ ֆերմենտի ակտիվությունը: ՊՀ-ն ակտիվացնում է նաև օստեորլաստներին, որոնք խթանում են պրոստեոկլաստներից հասուն օստեոկլաստների առաջացումը: Օստեոկլաստները քայլայում են ոսկրերում հանքայնացված կոլագենը՝ առաջացնելով օստեոպորոզ և բարձրացնելով կոտրվածքների վտանգը:

Սի քանի շաբաթներ և ամիսներ անց սկսվում է ոսկրանյութի քայլայումը, և շիճուկում բարձրանում է հիմնային ֆուֆատազայի մակարդակը: Վիտամին D-ի շարունակական անբավարարությունն ի վերջո հանգեցնում է շիճուկում ինչպես կալցիումի, այնպես էլ ֆուֆորի նվազեցման, քանի որ, չնայած բարձրացած ՊՀ-ի մակարդակի, հանքային նյութերի ներծծումը կատարվում է անբավարար: Դիմնային այս փուլում ի հայտ են գալիս «ծաղկուն» ռախիտին բնորոշ ոսկրային փոփոխությունները, որոնք կարելի են հայտնաբերել ֆիզիկական զննման ժամանակ և ռենտգենարանական քննությամբ:

\* ՄՄ- միջազգային միավոր, 1 ՄՄ=0.025 մկգ

Ուսկրի ոչ նորմալ հանքայնացումը հանգեցնում է ուսկրերի փափկեցման, եզրերի անհարթության և «ռախսիտիկ համրիչների» առաջացման: Այս փոփոխությունների արդյունքում նվազում է ուսկրի աճրությունը, որը կոմպենսացվում է ուսկրի չափերի մեծացումով՝ մետաֆիզի լայնացման հաշվին: Այնուամենայնիվ, ուսկրի կայունությունը նվազում է, և եթե խնդիրը շարունակվում է, առաջանում է ուսկրերի դեֆորմացիա:

## Կլինիկական դրսևնորումներ

### Արտառսկրային դրսևնորումներ

Վիտամին D-ի անբավարարությունը շարունակվում է ամիսներ, մինչ ֆիզիկական քննությամբ կհայտնաբերվեն ռախսիտի նշանները: Վիտամին D-ի պակասը կարող է արտահայտվել հիպոկալցեմիկ ցնցումներով, անբավարար աճով, քննությամբ, գրգռվածությամբ և շնչական վարակների հանդեպ նախատրանադրվածությամբ: Մեծ Բրիտանիայում կատարված ռետրոսպեկտիվ հետազոտությամբ (2004 թ.) ցույց է տրվել, որ երեխաների շրջանում վիտամին D-ի պակասն ի հայտ է գալիս 2 ձևով: Առաջին ձևը սիմպտոմատիկ հիպոկալցեմիան է (ներառյալ ցնցումները), որն առաջանում է արագ աճի շրջաններում, երբ բարձր են նյութափոխանակային պահանջները, և բավական ժամանակ անց նոր դիտվում են վիտամին D-ի անբավարությանը բնորոշ ֆիզիկական կամ ռենտգենաբանական փոփոխությունները: Երկրորդ կլինիկական դրսևնորմանը բնորոշ է առավելապես քրոնիկ ընթացքը, որն արտահայտվում է ռախսիտով և/կամ օստեոնալցիայով, նորմոկալցեմիայով կամ ասիմպտոմատիկ հիպոկալցեմիայով:

### Ուսկրային դրսևնորումներ

Ռախսիտի ուսկրային դրսևնորումներն ի հայտ են գալիս ուսկրի արագ աճի տեղամասերում, որոնց հանքայնացման համար պահանջվում է կալցիումի և ֆոսֆորի մեծ քանակներ: Բնորոշ ուսկրային փոփոխությունները հետևյալն են:

- գաղթունի փակման ուշացում
- քունքային և ճակատային շրջանների արտացցում

### • գանգի ուսկրերի փափկեցում (Craniotabes)

- կող-աճառային միացումների հաստացում, որոնք հայտնաբերվում են կրծքավանդակի առաջակողմնային շրջանում՝ «ռախսիտիկ համրիչներ»
- «Հարիսոնյան ակոսի» առաջացում՝ պայմանավորված ստորին կողերին ամրացած ստոծանու ձգումով
- կրծոսկրի դեֆորմացիա՝ «հավի» կամ «կոշկակարի» կրծքի առաջացում
- դաստակի հաստացում, ծղիկոսկրի և ճաճանչոսկրի դիստալ հատվածի կորացում
- ազդրի և ոլոքի կորացում (Նկար 1)
- ողնաշարի դեֆորմացիաներ՝ սկոլիոզ կամ կիֆոզ:

Ուսկրային դեֆորմացիայի տեսակը և առաջացման տեղը կախված է երեխայի տարիքից, քայլելու ունակությունից: Յետևաբար, դաստակի և դիստալ ոլոքի կորացումներն ավելի բնորոշ են կրծքահասակ երեխաներին, իսկ ֆիզիոլոգիկական վարուսային դեֆորմացիայի խորացումն ավելի բնորոշ է երեխային, ով նոր սկսել է քայլել: Ավելի մեծ երեխաների մոտ կարող է դիստվել վալգուսային կամ «քամուց առաջացած» դեֆորմացիա (մեկ ոտքի վալգուսային, իսկ մյուսի՝ վարուսային դեֆորմացիա): Դեֆորմացիայի տեսակը կախված է կենսամեխանիկական ուժերից, որոնք ազդուն են ստորին վերջույթի վրա, երբ արդեն առկա է կառուցվածքային թուլություն:



**Նկար 1.** Ռախսիտով պայմանավորված ստորին վերջույթների դեֆորմացիա

## ՌԵՆՏՈԳԵՆԱԲԱՆԱԿԱՆ ՎԻՒԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռախիտին բնորոշ վիւխությունները լավագույնս վիզուալիզացվում են արագ աճող ոսկրերի աճման գոտիներում:

Հետևաբար, վերին վերջույթներում դիստալ ծղիկոսկրը, իսկ ստորին վերջույթներում ծնկից վեր և վար գտնվող մետաֆիզային շրջանները վնասված հանքայնացման վաղ հայտնաբերման ամենաբնորոշ տեղերն են (Նկար 2 և 3):

**Նկար 2.** Դաստակի ռենտոգենաբանական առաջահետին նկար



Ա. Նորմա



Բ. Ռախիտ

Բ. Աչքի են ընկնում ծածանչոսկրի և ծղիկոսկրի դիստալ մետաֆիզաների հաստացումը, «գավաթաձև» լայնացումը և անհարդ եզրերը՝ համակցված աճման գոտու հաստացման հետ:

Էպիֆիզային աճառի լայնացումը և էպիֆիզ/մետաֆիզ սահմանի կալցիֆիկացման գոտու բացակայությունը ռախիտի սկզբնական նշաններից են: Քիվանդության առաջընթացին զուգահեռ ավելի ակնհայտ է դառնում աճման աճառի քայլացումը. ի հայտ է գալիս «գավաթաձև» լայնացում, եզրի անհարթություն և արտացցվածությունների առաջացում: Երկար ոսկրերի դիաֆիզներում աչքի է ընկնում օստեոպենիան, իսկ ոսկրի մակերեսային շերտը բարակում է: Խանգարվում է նաև ոսկրի խտրոցավոր կառուցվածքը, առաջանում է դիաֆիզների դեֆորմացիա: Ծանր ռախիտի դեպքում դիտվում են նաև ախտաբանական կոտրվածքների և լուսերի գոտիների առաջացում\*:



**Նկար 3.** Աչքի են ընկնում ռախիտին բնորոշ ռենտոգենաբանական վիւխությունները՝ էպիֆիզներում հանքայնացման նվազումը և ստորին վերջույթների դեֆորմացիան:

\* Լուսերի գոտիներն օստեոմալացիային բնորոշ ռենտոգենաբանորեն հայտնաբերվող վիւխություններ են, իրենցից ներկայացնում են կեղծ կոտրվածքներ, ծեղբեր կամ գծեր, որոնք ունեն 2-5 մմ լայնություն և սկլերոտիկ եզրեր: Դրանք սովորաբար երկկողմանի են, համաչափ և ուղղահայաց են ոսկրերի մակերեսային շերտին: Յաճախ հայտնաբերվում են ազդրի վզիկի շրջանում, սակայն կարող են լինել նաև ծղիկին, անրակին, թիակին, կողերին և մետատարզալ ոսկրերին:

## Լաբորատոր փոփոխություններ

Վիտամին D դեֆիցիտային ռախիտին բնորոշ լաբորատոր փոփոխությունները տրված են աղյուսակ 1-ում:

### Աղյուսակ 1

Ռախիտի տեսակը	Կալցիում	Ֆոսֆոր	Հիմնային ֆոսֆատազա	ՊՆ	25 [OH]D	1,25 [OH]2D	Կալցիումի քանակը մեզում
Վիտամին D դեֆիցիտային ռախիտ	↓ կամ N	↓ կամ N	↑	↑	↓	↓ կամ N	↓ կամ N
Վիտամին D կախյալ ռախիտ, տիպ 1	↓	↓ կամ N	↑↑	↑	N	↓↓	↓
Ժառանգական վիտամին D կայուն ռախիտ (Վիտամին D կախյալ ռախիտ, տիպ 2)	↓	↓ կամ N	↑↑	↑	N	↑↑	↓
X-շղթայված հիպոֆոսֆատենիա	N	↓↓	↑	N	N	N կամ ↓	↓
Ժառանգական հիպոֆոսֆատենիկ ռախիտ, հիպերկալցիուրիայով	N	↓↓	↑	N կամ ↓	N	↑	↑

↑ բարձր, ↓ ցածր, N նորմալ

Յարկ է նշել, որ հիմնային ֆոսֆատազան բարձրանում է ռախիտի բոլոր տեսակների ժամանակ: Այն իրենից ներկայացնում է հիվանդության ակտիվությունը գնահատող ցուցանիշ, քանի որ մասնակցում է ոսկրի և աճնան աճառային գոտու հանքայնացմանը: Մյուս կողմից, ոսկրերի ապահանքայնացումով երեխայի մոտ հիմնային ֆոսֆատազայի շատ ցածր արժեքի դեպքում, բարձր է հազվադեպ հանդիպող ժառանգական հիվանդության՝ հիպոֆոսֆատազիայի հավանականությունը:

Շիճուկում **ՊՆ-ի** մակարդակը սովորաբար բարձրանում է վիտամին D դեֆիցիտային ռախիտի ժամանակ:

Օրգանիզմում վիտամին D-ի պաշարներն արտահայտող ցուցանիշ է շիճուկում 25-OH վիտամին D-ն, որը վիտամին D դեֆիցիտային ռախիտի ժամանակ նվազում է: Կարևոր է նշել, որ 25[OH]D-ի փոխարեն 1,25[OH]2D-ի որոշումը կարող է բերել սխալ մեկնաբանությունների, քանի որ

1,25[OH]2D-ի խտությունը շիճուկում կարող է լինել նորմալ կամ նույնիսկ բարձր՝ պայմանավորված երկրորդային հիպերպարաթիրոհիզմով:

### Տարբերակիչ ախտորոշում

Ռախիտի պատճառները տարբեր են և ներառում են բոլոր այն վիճակները, որոնք բերում են հիպոկալցենիայի և/կամ հիպոֆոսֆատենիայի՝ պայմանավորված անբավրար ընդունումով, մալաքսորբցիայով կամ կալցիումի, ֆոսֆորի, վիտամին D-ի կորստով (աղյուսակ 2): Բուժումը ճիշտ կազմակերպելու համար կարևոր է տարբերել ռախիտի հազվադեպ հանդիպող տեսակները վիտամին D դեֆիցիտային ռախիտից:

Ռախիտի և կմախքային դիսպլազիայի կլինիկական նշանները կարող են նույնանման լինել, սակայն վերջինիս դեպքում շիճուկում ֆոսֆորի և **ՊՆ-ի** խտությունները լինում են նորմայի սահմաններում:

## Աղյուսակ 2. Ռախիտի առաջացման պատճառները

### Դանքային նյութերի անբավարար ընդունում

Կալցիումի անբավարար ընդունում

Ֆոսֆորի անբավարար ընդունում

### Դանքային նյութերի անբավարար ներծծում

Վիտամին D դեֆիցիտային ռախիտ

Վիտամին D կախյալ ռախիտ, տիպ 1

Վիտամին D ռեզիստենտ ռախիտ (Վիտամին D կախյալ ռախիտ, տիպ 2)

Մեծ քանակով ֆիտինի օգտագործում (օր.՝ սոյայի հիմքով կաթնախառնուրդ)

Անտացիդներ

Դակացնցումային դեղամիջոցներ (օր.՝ ֆենիթոին, ֆենոբարբիտալ)

Երիկամային անբավարարություն

Ֆանկոնիի համախտանիշ

Լյարդային անբավարարություն

ճարպային մալաբսորբցիա (օր.՝ մուկովիսիցիտոզ)

### Դանքային նյութերի բարձրացած արտազատում

Ֆուրոսենիդ

Երիկամային խողովակային անբավարարություն

Ֆոսֆատուրիա (օր.՝ X-շղթայված հիպոֆոսֆատեմիկ ռախիտ, ժառանգական հիպոֆոսֆատեմիկ ռախիտ՝ հիպերկալցիուրիայով, ուռուցքով պայմանավորված օստեոնալացիա)

Երիկամային խողովակային ացիդոզ՝ հիպերկալցիուրիայով

Երիկամային խողովակների վնասում (օր.՝ մուկովիսիցիտոզ, ցիստինոզ, թիրոզինոզ, գալակտոզեմիա, ֆրուկտոզային անհանդուրժողականություն, Վիլսոնի հիվանդություն, կապարով կամ այլ ծանր մետաղներով թունավորում)

Ուռուցք

### Ուսկրի բջիջների տեղային դեֆեկտ

Հիպոֆոսֆատազիա (հիմնային ֆոսֆատազի անբավարարություն)

## Վիտամին D-ի պահանջը

Նախկինում համարվում էր, որ վիտամին D-ի հիմնական աղբյուրը վերջինիս սինթեզն է մաշկում՝ արևի ճառագայթների ազդեցությամբ: Եթե նաշկի բաց պիզմենտացիա ունեցող չափահասի ամբողջ նարմինն ամառային ամիսների ընթացքում 10-15 րոպե ենթարկվի արևի ազդեցությանը, ապա օրական կսինթեզվի 10000 և 20000 ՄՄ վիտամին D: Մուգ մաշկով անհատների մոտ նույն քանակով վիտամին D-ի սինթեզի համար պահանջվող արևի ազդեցությունը 5 -10 անգամ ավելի է: Վի-

տամին D-ի սինթեզի համար անհրաժեշտ արևի ճառագայթների քանակը կախված է նաև մի շարք այլ գործոններից, որոնցից են մարմնի զանգվածը, աշխարհագրական լայնությը, տարվա եղանակը, ուլտրամանուշակագույն ճառագայթներից պաշտպանումը՝ հագուստը և արևից պաշտպանող քսուքները:

Յետևաբար, դժվար է որոշել, թե որն է երեխաների համար արևի ազդեցության աղեկված տևողությունը: Ավելին, ԱՄՆ-ի հիվանդությունների կանխարգելման և վերահսկման կենտրոնը (CDC) մի շարք այլ

կազմակերպությունների աջակցությամբ, ներառյալ ԱՄՆ-ի Մանկաբուժական Ակադեմիան (AAP) և Քաղցկեղի Ամերիկյան Միավորումը (American Cancer Society), 1998 թ-ին մեկնարկեցին մի առողջապահական հանրային ծրագիր, որի նպատակն էր բարձրացնել օգնությունն արևի ճառագյրերի ազդեցության և նաշկի տարրեր քաղցկեղների ռիսկի վերաբերյալ: Այդ ուղղությամբ հետազոտությունները շարունակական բնույթ ունեն: Վերջերս կատարված անուղղակի համաճարակաբանական հետազոտման արդյունքում ենթադրվում է, որ մաշկի քաղցկեղի վտանգի առումով ավելի կարևոր է, թե որ տարիքում է սկսվում արևի ուղղակի ազդեցությունը, քան կյանքի ընթացքում դրա գումարային ազդեցությունը: Ներկայումն ԱՄՆ-ի Մանկաբուժական Ակադեմիան հանձնարարում է, որ 6 ամսականից փոքր երեխաները չպետք է ենթարկվեն արևի ճառագյրերի ուղղակի ազդեցությանը: Չնայած ուղեցույցում խրախուսվում է երեխաների՝ դրսում անցկացված ժամերը, սակայն խորհուրդն է տրվում կրել պաշտպանիչ հագուստ և օգտագործել արևից պաշտպանող քսութեք:

### **Վիտամին D-ի պահանջը հղիության ընթացքում**

Հետազոտություններով ցույց է տրվել, որ մայրական և պտղի շրջանառող 25[OH]D-ի միջև գոյություն ունի խիստ կապ: Մայրական վիտամին D-ի արտահայտված դեֆիցիտի դեպքում պտղի մոտ կարող է զարգանալ ռախիտ, և այս անբավարարությունը կդրսնորվի ծնվելուց հետո: Յոհիության վերջին եռամսյակում օրական 400 ՍՍ վիտամին D-ի ընդունումը նվազագույն ազդեցություն ունի և մոր, և պտղի շրջանառող 25[OH]D-ի խտության վրա: Սակայն, վիտամին D-ի պակաս ունեցող և լրացուցիչ վիտամին D չստացած մայրերից ծնված երեխաների մոտ ավելի շուտ է զարգանաւում վիտամին D-ի անբավարարությունը քան վիտամին D ընդունած մայրերի երեխաների շրջանում: Յոհիության ընթացքում աղեկված վիտամին D-ի քանակը կարևոր է պտղի կմախքի և ատամների էմալի ձևավորման և, հավանաբար, նաև պտղի նորմալ աճի ու զարգացման համար:

Յոհիության առաջին երկու եռամսյակների ընթացքում ձևավորվում է պտղի կմախքի

կոլագենային կաղապարը, իսկ հանքայնացումը սկսվում է վերջին եռամսյակում: Այդ շրջանում, համապատասխանբար, բարձրանում է հղի կնոջ կալցիումի պահանջը, և խթանվում է 1,25[OH]2D-ի սինթեզը երիկամներում ու ընկերքում:

Վերջերս ցույց է տրվել, որ օրական 600 ՍՍ վիտամին D-ի ընդունումը հղի կնոջ մոտ չի կանխում վիտամին D-ի դեֆիցիտի առաջացումը, և մի շարք հետազոտությունների արդյունքում մշակվել են տարբեր առաջարկներ: Մեզ հասանելի գրականությունում առավել թարմ առաջարկները ներկայացված են Էնդոքրինոլոգիական միավորման ուղեցույցում (Endocrine Society Clinical Practice Guideline, 2011): Յեղինակները համարում են, որ հղիության և կրծքով կերակրման ընթացքում շիճուկում 30 նգ/մլ-ից բարձր խտությամբ 25[OH]D-ի պահանջման համար կինը պետք է օրական ստանա մոտավորապես 1500-2000 ՍՍ վիտամին D: Որպես տարբերակ առաջարկվում է հետևյալ մոտեցումը. 400 ՍՍ-ը նշանակել վիտամին D պարունակող մոլուտիվիտամինի կազմում, իսկ 1000-ը՝ վիտամին D-ի ձևով:

### **Կանխարգելիչ վիտամին D կրծքահասակ երեխաների համար**

Չնայած ակնհայտ է, որ կրծքի կաթը մինչև մեկ տարեկան երեխաների համար լավագույն սնունդն է, սակայն վերջինիս վիտամին D-ի պարունակությունը բավարար չէ: Կրծքի կաթում վիտամին D-ի պարունակությունը կախված է մոր օրգանիզմում վիտամին D-ի քանակից: Կրծքի կաթում վիտամին D-ի պարունակությունը ցածր է (մոտավորապես 20 ՍՍ/լ), իսկ մոր մոտ վիտամին D-ի պակասի դեպքում վերջինիս քանակը նույնիսկ ավելի քիչ է: Օրական 400 ՍՍ վիտամին D ստացող կերակրող մոր կաթում վիտամին D-ի պարունակությունը տատանվում է 25 -78 ՍՍ/լ: Բացառապես կրծքով կերակրվող երեխաները, ովքեր չեն ստանում վիտամին D կանխարգելիչ նպատակով, ունեն վիտամին D դեֆիցիտային ռախիտի առաջացման բարձր ռիսկ:

Վիտամին D դեֆիցիտային ռախիտի կանխարգելման ուղեցույցները շարունակաբար փոփոխվում են, և այդ թվում փոխ-

վում է կանխարգելման նպատակով առաջարկվող վիտամին D-ի կանխարգելիչ դեղաչափը (AAP 2003թ., AAP 2008թ., The Endocrine Society 2011թ.):

ԱՄՆ-ի Մանկաբուժական Ակադեմիայի 2003 թ-ի ուղեցույցում հանձնարարվում էր ռախիտի կանխարգելման նպատակով կրծքահասակ երեխաներին նշանակել օրական 200 ՄՄ վիտամին D: Սակայն հետագայում ցույց տրվեց, որ օրական 200 ՄՄ վիտամին D-ի ընդունումը բավարար չէ, որպեսզի կրծքահասակ երեխայի շիճուկում 25[ՕՀ]D-ի մակարդակը պահպանվի  $\geq 20$  նգ/մլ (50 նմոլ/լ): Եզրակացվեց, որ բացառապես կրծքով սնուցվող երեխաների շիճուկում 25[ՕՀ]D-ի  $\geq 20$  նգ/մլ խտության պահպանման համար անհրաժեշտ է օրական 400 ՄՄ վիտամին D-ի ընդունում:

Հիմնվելով հետևյալ վիաստերի վրա.

- Վիտամին D-ի անբավարարությունը կարող է զարգանալ վաղ նաև կուրքան շրջանում, մասնավորապես, եթե մայրը հիդրության ընթացքում ունեցել է վիտամին D-ի պակաս
- 25[ՕՀ]D-ի խտությունը շատ ցածր է կրծքով կերակրվող այն երեխաների շրջանում, ովքեր չեն ստանում լրացուցիչ վիտամին D
- Դժվար է որոշել, թե արևի ճառագայթների որքան ազդեցություն է անհրաժեշտ 25[ՕՀ]D-ի աղեկվատ մակարդակ ապահովելու համար
- 25[ՕՀ]D-ի խտությունը շիճուկում պահպանվում է  $>20$  նգ/մլ, այն դեպքում, եթե կրծքով կերակրվող երեխան ստանում է օրական 400 ՄՄ վիտամին D:

2008 թ-ին ԱՄՆ-ի Մանկաբուժական Ակադեմիան վերանայեց կանխարգելիչ նպատակով վիտամին D-ի նշանակման վերաբերյալ հանձնարարականը, և այն ընդունվեց մի շարք զարգացած երկրներում: Ըստ այդ հանձնարարականի՝ կանխարգելիչ նպատակով վիտամին D անհրաժեշտ է տալ երեխայի կյանքի առաջին օրերից և շարունակել մանկության ընթացքում՝ օրական 400 ՄՄ: Յուրաքանչյուր կրծքով սնվող երեխա, անկախ լրացուցիչ վիտա-

մին D-ով հարստացված աղապտացված խառնուրդ ընդունելու վիաստից, պետք է օրական ստանա 400 ՄՄ վիտամին D, քանի որ մասնակի կրծքով սնվող երեխան դժվար թե կարողանա ընդունել օրական 1 լ աղապտացված կարնախառնուրդ (հայտնի է, որ կաթնախառնուրդի 1 լ-ն է պարունակում 400 ՄՄ վիտամին D): Անգամ միայն աղապտացված խառնուրդով կերակրվող այն երեխաները, ովքեր օրական ընդունում են 1 լ-ից քիչ կարնախառնուրդ, նույնպես կանխարգելիչ վիտամին D-ի կարիք ունեն՝ օրական 400 ՄՄ:

2011 թ-ին Ենդոկրինոլոգիական Միավորման կողմից առաջարկվող ուղեցույցում նշվում է, որ մեկ տարեկանից հետո վիտամին D-ի օրական պահանջը կազմում է 600 ՄՄ:

**Ծանոթություն.** ՀՀ-ում ներկայումս վիտամին D-ի հասանելի դեղամիջոցը վիտամին D<sub>3</sub>-ի (խոլեկալցիֆերոլ) լուծույթն է, որի մեկ կարգիլը պարունակում է 500 ՄՄ վիտամին D: Քանի որ 400 ՄՄ-ը կանխարգելիչ նշագագույն պահանջվող քանակն է, և հիպերվիտամինոզի վտանգ է առաջանում շատ ավելի բարձր դեղաչափերից (տես «Հիպերվիտամինոզ D» ենթագլուխութեա), ապա ռախիտի կանխարգելման նպատակով ընդունելի է օրական 500 ՄՄ-ի նշանակումը:

### Վիտամին D-ն ուշ մանկության և դեռահասության շրջանում

Ինչպես արդեն նշվել է, վիտամին D-ի պակաս կարող է դիտվել ոչ միայն կրծքահասակ և վաղ տարիքի երեխաների շրջանում, այլ նաև ավելի մեծ երեխաների ու դեռահասների մոտ: Շիճուկում 25[ՕՀ]D-ի ցածր խտությունը կարող է բերել երկրորդային հիպերպարաթրոհիդրոզի, ինչը կերպով ոսկրերի հանքային նյութերի լվացման և սպառման, հատկապես արագ աճի շրջանում:

Դեռահասության շրջանում վիտամին D-ի դեֆիցիտը կարող է դրսևորվել տարբեր ձևերով, ներառյալ՝ հիպոկալցեմիկ տետանիա (կարպությալ սպազմ), ստորին վերջույթների դեֆորմացիա, վերջույթների ցավ, պրոգրեսիվող մկանային թուլություն (H. Narchi et al, 2001 թ.):

Ուկրերի ճիշտ ձևավորման համար անհրաժեշտ է ապահովել աղեկվատ վիտամին

D-ի և կալցիումի ներմուծում: Համաձայն ԱՄՆ-ի Մանկաբուժական Ակադեմիայի 2008 թ. ուղեցույցի, ուշ մանկության և դեռահասության ընթացքում վիտամին D-ի օրական նվազագույն պահանջը կազմում է 400 ՄՄ, իսկ ըստ Ենդոկրինոլոգիական Միավորման 2011 թ. հանձնարարականի՝ 600 ՄՄ: Սակայն հաճախ դժվար է միայն սննդի միջոցով բավարարել վիտամին D-ի օրական նվազագույն պահանջը: Խնդրի լուծման հնարավոր տարրերակ է սննդամթերքի հարստացումը վիտամին D-ով:

ԱՄՆ-ում և Կանադայում կաթը, որոշ հացանթերքներ, նարնջի հյութը, հացահատիկը, յոգուրտը և պանիրը հարստացվում են վիտամին D-ով: Եվրոպական Երկրների մեծ մասում կաթը վիտամին D-ով չի հարստացվում, քանի որ 1950-ական թթ. դիտվել է երեխաների ինտոքսիկացիա վիտամին D-ով, և ընդունվել է սննդի՝ վիտամին D-ով հարստացումն արգելող օրենք: Այնուամենայնիվ, այսօր Շվեյցարյան և Ֆինլանդիայում կաթը, իսկ Եվրոպական այլ երկրներում՝ ձավարը, հացահատիկը և մարգարինը հարստացվում են վիտամին D-ով:

ՀՀ-ում սննդամթերքը վիտամին D-ով չի հարստացվում: Հետևաբար, ավելի մեծ երեխաների համար նույնական կարելի է խորհուրդ տալ օգտագործել 400 ՄՄ վիտամին D պարունակող դեղամիջոց:

Անհրաժեշտ են լրացուցիչ հետազոտություններ, որպեսզի վերջնականապես գնահատվի ուշ մանկության և դեռահասության շրջանում վիտամին D-ի օպտիմալ մակարդակը, ինչպես նաև պարզելու համար, արդյոք հնարավոր է այս մակարդակն ապահովել միայն սննդի միջոցով, թե հավելյալ վիտամին D-ի նշանակելու կարիք կա:

Մաշկի մուգ գունավորում, արևի սահմանափակ ազդեցություն, ճարպերի մալաբսորբցիայով ուղեկցվող քրոնիկ հիվանդություններ (օր.՝ մուկովիսիցիտոզ) ունեցող, որոշ հակացնցումային դեղամիջոցներ ընդունող երեխաները կարող են վիտամին D-ի ավելի բարձր պահանջներ ունենալ:

## Քրոնիկ երիկամային հիվանդությամբ երեխաներ

Քրոնիկ երիկամային հիվանդությամբ (4-րդ կամ 5-րդ փուլում), որոպեում 30 մլ-ից ցածր

կծիկային ֆիլտրացիայի արագություն ունեցող (հաշվարկված 1.73 մ<sup>2</sup> մարմնի մակերեսի համար), ինչպես նաև դիալիզի կարիքով պացիենտները անկարող են սինթեզել բավարար քանակի 1,25 դիհիդրօքսիվիտամին D: Այս դեպքերում կալցիումի նորմալ փոխանակության պահպաննան, Պ3-ի մակարդակի նվազեցման և ուկրերի երիկամային ծագման հիվանդության կանխարգելման համար անհրաժեշտ է հավելյալ նշանակել 1,25 դիհիդրօքսիվիտամին D<sub>3</sub>:

## Մալաբսորբցիա և դեղամիջոցներ

Լյարդային անբավարությամբ կամ աղիքային ճարպային մալաբսորբցիայով հիվանդները վիտամին D-ի ավելի բարձր պահանջներ ունեն:

Որոշ դեղամիջոցներ նույնական բարձրացնում են վիտամին D-ի պահանջը:

- Հակացնցումային և ՄԻԱՎ վարակի բուժման համար կիրառվող հակառակությունները կարող են վիտամին D-ի անբավարության զարգացման պատճառ դառնալ, քանի որ արագացնում են 25 [ՕՀ] D-ի և 1,25[ՕՀ]2D-ի կատարողականը:

- Գյուլկուկորտիկուլիդները բարձրացնում են վիտամին D-ի պահանջը, քանի որ ճնշում են աղիներից կալցիումի ներձնումը:

- Կետոկոնզոլը և որոշ հակասընկային այլ դեղամիջոցներ նույնական բարձրացնում են վիտամին D-ի պահանջը, քանի որ արգելակում են 1- α հիդրօքսիլացումը:

## Բուժում

Վիտամին D-ի պակասի բուժումը վիտամին D<sub>2</sub>-ի (էրգոկալցիֆերոլ) կամ D<sub>3</sub>-ի (խոլկալցիֆերոլ) նշանակումն է: Վիտամին D դեֆիցիտային ռախիտի բուժման համար առաջարկվում են հետևյալ դեղաչափերը:

- 1000 ՄՄ օրական <1 ամսական երեխաների համար
- 1000 -ից 5000 ՄՄ օրական 1-ից 12 ամսական երեխաների համար
- 5000-ից 10000 ՄՄ մեկ տարեկան և ավելի մեծ երեխաների համար

Այս դեղաչափերը ցուցված են նաև այն երեխաների համար, ովքեր ունեն շիճուկում 25 [ՕՀ]D -ի ցածր խտություն, սակայն չունեն ռախիտի նշաններ:

Նշված դեղաչափերով բուժումն անհրաժեշտ է շարունակել մինչև ռենտգենաբանական հետազոտությամբ կդիտվի լավացում, ապա անհրաժեշտ է դեղաչափը նվազեցնել 400 ՍՍ: Խորհուրդ է տրվում կրկնել ռենտգենաբանական քննությունը բուժումը սկսելուց երեքից վեց ամիս անց:

Որպես բուժման այլընտրանքային միջոց առաջարկվում է միանվագ բարձր դեղաչափով վիտամին D-ի նշանակումը (600000 ՍՍ բերանացի ընդունման): Այս դեղաչափը համարժեք է օրական 5000 ՍՍ-ով եռամսյա բուժմանը: Սակայն այս բարձր դեղաչափը կարող է բերել հիպերկալցեմիայի: Ենթադրվում է, որ 150000 կամ 300000 ՍՍ-ով միանվագ նշանակմամբ բուժումն ունի միևնույն արդյունավետությունը, սակայն հիպերկալցեմիայի վտանգն ավելի ցածր է:

Անհրաժեշտ է միաժամանակ ապահովել մոտավորապես 1000 մգ/օրը կալցիումի ընդունում, որպեսզի կանխվի այսպես կոչվող «քաղցած ոսկրերի» համախտանիշի առաջացումը՝ վիտամին D-ով բուժումը սկսելուց հետո հիպոկալցեմիայի խորացումը (քանի որ վիտամին D-ն մասնակցում է նաև արյունից ոսկրեր կալցիումի տեղափոխմանը): Կալցիումի ցանկալի մակարդակը հնարավոր է պահպանել՝ նշանակելով օրական 30-75 մգ/կգ էլեմենտային կալցիում՝ երեք ընդունումով: Վիտամին D-ի և կալցիումի նշված դեղաչափերով բուժման դեպքում սովորաբար բիոքիմիական և ռադիոլոգիական լավացում է դիտվում երեք ամիս: Օրգանիզմում վիտամին D-ի և կալցիումի պաշարների վերականգնման մասին է վկայում մեզում կալցիումի հայտնվելը: Եթե բուժումից երեք ամիս անց հիվանդը չի ունենում կալցիուրիա, ապա անհրաժեշտ է շարունակել բուժումը նույն դեղաչափով և երեք ամիս և ապա՝ վերագնահատել արդյունքները:

Բուժումից հետո սովորաբար ոսկրային դեֆորմացիաներն անցնում են: Այն դեպքերում, երբ ռենտգենաբանորեն աճի գոտիները նորմալացել են, սակայն ոսկրային դեֆորմացիաները պահպանվում են, անհրաժեշտ է կատարել օրթոպեդի

խորհրդատվություն՝ վիրահատական միջամտության անհրաժեշտությունը քննարկելու նպատակով:

Ախտանիշային հիպոկալցեմիա ունեցող երեխաներին (ներառյալ ցնցումներ կամ տետանիա) ցուցված է ներերակային կալցիումի գյուկոնատի ներարկում՝ 10 -20 մգ/կգ դեղաչափով էլեմենտային կալցիումի հաշվարկով, ընդ որում անհրաժեշտ է ներարկել դանդաղ, 5-ից 10 րոպեի ընթացքում (1-2 մլ/կգ 10 % լուծույթ):

Վիտամին D-ի կենսաբանորեն ակտիվ ձևի՝ կալցիտրիոլի (1,25[ՕՀ]2D) նշանակման անհրաժեշտություն չկա, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է ծանր, սիմպտոնատիկ հիպոկալցեմիա (ինչպես նաև վերը նշված երիկանային հիվանդությունների ժամանակ): Ծանր հիպոկալցեմիայի դեպքում 20-ից 100 մգ/կգ/օրը դեղաչափով կալցիտրիոլի, ներերակային կալցիումի գյուկոնատի և վիտամին D-ի բարձր դեղաչափերի նշանակումը կարող է ավելի արագ կարգավորել շիճուկում կալցիումի մակարդակը, քան միայն վիտամին D-ով բուժումը: Սակայն անհրաժեշտ է հիշել, որ կալցիտրիոլը չի մասնակցում վիտամին D-ի պաշարների վերականգմանը, քանի որ ունի կարծ կիսատրոհման ժամանակ:

## ՀԱԿՈԴՈՒԹՅՈՒՆ

Վիտամին D դեֆիցիտային ռախիտի բուժումն սկսելուց չորս շաբաթ անց անհրաժեշտ է ստուգել շիճուկում կալցիումի, ֆոսֆորի, հիմնային ֆոսֆատազայի կոնցենտրացիաները և մեզի կալցիում/կրեատինին փոփոխարժեությունը: Այդ ժամանակ արդեն շիճուկում կալցիումի և ֆոսֆորի մակարդակները պետք է նորմալացած լինեն, իսկ հիմնային ֆոսֆատազան պետք է սկսի նվազել: Մեզում կարող է դեռ կալցիում չլինել կամ արդեն հայտնաբերվել: Երեք ամիս անց անհրաժեշտ է կրկնել նշված բոլոր լաբորատոր հետազոտությունները և ռենտգենաբանական քննությունը: Եթե երեք ամիս անց ռենտգենաբանական քննությամբ լավացում չի դիտվում, ապա պետք է մտածել բուժման անհետողականության, մալաքսորբցիայի կամ ռախիտի այլ տեսակների մասին:

## ՊՐՈԳՐԱՄ

Վիտամին D դեֆիցիտային ռախիտի ելքը բարենպաստ է: Ռախիտի վաղ ախտորո-

շումը և բուժումը կանխում է շարժողական զարգացման հապաղումը: Բավարար քանակով վիտամին D-ի նշանակման պայմաններում ուսկի վերականգնումը սկսվում է մի քանի օրում և շարունակվում է ամիսների ընթացքում: Մի շարք դեպքերում ուսկրային դեֆորմացիաները բուժման ընթացքում կարող են ապահանվել ամիսներից տարիներ: Ստորին վերջույթների արտահայտված դեֆորմացիաները կարող են անցնել մի քանի տարիների ընթացքում՝ առանց վիրաբուժական միջամտության: Սակայն վերին վերջույթների կորացումը, ոտքերի վարուսային և վալգուսային դեֆորմացիաները, կրծքավանդակի ձևախախումը, ռախիտիկ կոնքի առաջացումը, կարճահասակությունը կարող են կայուն պահպանվել:

## Դիպերվիտամինոզ D

Վիտամին D-ով պայմանավորված ինտոքսիկացիան հազվադեպ հանդիպող երևույթ է և կարող է առաջանալ վիտամին D-ի գերբարձր դեղաչափերի ընդունումից: Օրական 50000 ՍՍ-ը գերազանցող դեղաչափը բարձրացնում է շիճուկում 25 [OH] D-ի մակարդակը 150 նգ/մլ (374 նմոլ/լ) -ից ավելի և կարող է բերել հիպերկալցեմիայի ու հիպերֆոսֆատեմիայի: Մինչև հինգ ամիս տևողությամբ օրական 10000 ՍՍ վիտամին D-ի նշանակումը տոքսիկ ազդեցություն չի առաջացնում:

## Ամփոփում

- Վիտամին D դեֆիցիտային ռախիտը կանխարգելելի հիվանդություն է:
- Օրգանիզմում վիտամին D-ի պաշարներն արտահայտող ցուցանիշ է շիճուկում 25-OH վիտամին D-ի մակարդակը:
- Յուրաքանչյուր երեխա, ով սնվում է բացառապես, մասնակի կրծքով կամ ոչ աղապտացված սննդատեսակներով (ներառյալ անհաս ծնվածները), մինչև մեկ տարեկան հասակը պետք է օրական ստանա 400 ՍՍ վիտամին D՝ սկսած կյանքի առաջին օրերից, առանց սեղոնային ընդմիջնան: Վիտամին D-ի նշանակումը դադարեցվում է այն ժամանակ, երբ երեխան անցնում է արհետական կամ մասնակի կրծքով սնուցման և օրական ընդունում է առնվազն 1 լ վիտամին D-ով հարստացված աղապտացված խառնուրդ:

• Արհեստական սնուցման (վիտամին D-ով հարստացված աղապտացված կաթնախառնուրդներ) դեպքում նույնպես երեխան պետք է մինչև մեկ տարեկանը օրական ընդունի 400 ՍՍ վիտամին D, եթե օրական ստանում է 1 լիտրից պակաս կաթնախառնուրդ:

• Մեկ տարեկանից հետո (ներառյալ դեռահասության շրջանում) վիտամին D-ի օրական նվազագույն պահանջը կազմում է 400 ՍՍ:

• Ենդոկրինոլոգիական Միավորումն (2011 թ.) առաջարկում է հիդության և կրծքով կերակրման ընթացքում, կնոց վիտամին D-ի պահանջը բավարարելու նապատակով, ապահովել օրական 1400 ՍՍ վիտամին D-ի ընդունում:

## Գրականություն.

- **Michael F Holick - Vitamin D Deficiency.**
  - The New England Journal of Medicine, 2007, vol 357, pp 266-281
- **Kumaravel Rajakumar - Vitamin D, Cod-Liver Oil, Sunlight, and Rickets: A Historical Perspective.**
  - Pediatrics, 2003, vol 112, e132-e135
- **Carol L.Wagner, Frank R.Greer - Prevention of Rickets and VitaminD Deficiency in Infants,Children, and Adolescents.**
  - Pediatrics, 2008, vol 122, pp1142-1152
- **Michal L Melamed - Low levels of 25-hydroxyvitamin D in the pediatric populations: prevalence and clinical outcomes.**
  - Ped Health, 2010, vol 4(1), pp 89-97
- **Terence A. Joiner, Carol Foster and Thomas Shope - The Many Faces of Vitamin D Deficiency Rickets.**
  - Pediatrics in Review, 2000, vol 21, pp 296-302
- **Endocrine Society Clinical Practice Guideline: Evaluation, Treatment, and Prevention of Vitamin D Deficiency.**
  - J Clin Endocrinol Metab, 2011, vol 96(7), pp 1911-1930
- **Frank Rauch - Overview of rickets in children.**
  - available at <http://www.uptodate.com>.  
Updated: Jun 28, 2011
- **H Narchi, M El Jamil, N Kulaylat - Symptomatic rickets in adolescence.**
  - Archives of Disease in Childhood, 2001, vol 84, pp 501-503

## Դարցեր ինքնագնահատման համար.

### 1. Վիտամին D-ի նյութափոխանակության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- Ա. Վիտամին D-ն ընդամենը մեկ անգամ ենթարկվում է հիդրօքսիլացման և առաջանում է կենսաբանորեն ակտիվ 25-հիդրօքսիվիտամին D (25[OH]D)
- Բ. Վիտամին D-ի առաջին հիդրօքսիլացումը տեղի է ունենում յարդում, առաջանում է 1,25 դիհիդրօքսիվիտամին D (1,25[OH]2D)
- Գ. Երկրորդ հիդրօքսիլացումը կատարվում է իմնականում երիկամներում, և առաջանում է 25-հիդրօքսիվիտամին D (25[OH]D)
- Դ. Վիտամին D-ն երկու անգամ ենթարկվում է հիդրօքսիլացման՝ յարդում, ապա երիկամներում, և արդյունքում առաջանում է կենսաբանորեն ակտիվ 1,25 դիհիդրօքսիվիտամին D (1,25[OH]2D)

### 2. Մարդու օրգանիզմում վիտամին D-ի պաշարներն արտահայտող ցուցանիշ է.

- Ա. 25-հիդրօքսիվիտամին D-ն (25[OH]D)
- Բ. 1,25 դիհիդրօքսիվիտամին D-ն (1,25[OH]2D)
- Գ. Խոլեկալցիֆերոլը
- Դ. Էրգոկալցիֆերոլը

### 3. Յոթ ամսական երեխայի մոտ կարող են դիտվել ռախիտով պայմանավորված նշված ուսկրային փոփոխությունները, բացի.

- Ա. քունքային և ճակատային շրջանների արտացցում
- Բ. դաստակի դեֆորմացիա
- Գ. ստորին վերջույթների դեֆորմացիա
- Դ. կող-աճառային միացումների հաստացում

### 4. Ռախիտի կանխարգելման նպատակով մինչև մեկ տարեկանը վիտամին D-ի նշանակման վերաբերյալ ճիշտ է հետևյալ պնդումը.

- Ա. Վիտամին D-ն անհրաժեշտ է նշանակել կրծքահասակ երեխային՝ կախված եղանակից. «սեզոնային» կանխարգելում
- Բ. աղապտացված կաթնախանուրդով սնվող երեխաները լրացուցիչ վիտամին D-ի նշանակման կարիք չունեն՝ անկախ օրական ընդունած խառնուրդի քանակից
- Գ. Վիտամին D-ն անհրաժեշտ է նշանակել առանց սեզոնային ընդմիջումների՝ շուրջտարյա կանխարգելում
- Դ. արևաշատ վայրերում երեխայի խնամքը ճիշտ կազմակերպելու դեպքում (ներառյալ՝ «մարդու օդի հանելը») ռախիտի կանխարգելման համար բավարար է միայն արևի ազդեցությունը՝ առանց վիտամին D-ի նշանակման

### 5. Վիտամին D դեֆիցիտային ռախիտին բնորոշ են հետևյալ լաբորատոր փոփոխությունները.

- Ա. շիճուկում հիմնային ֆոսֆատազայի, պարաք հորմոնի և 25-հիդրօքսիվիտամին D-ի (25[OH]D) խտության նվազում
- Բ. շիճուկում հիմնային ֆոսֆատազայի, պարաք հորմոնի խտության բարձրացում և 25-հիդրօքսիվիտամին D-ի (25[OH]D) մակարդակի նվազում
- Գ. շիճուկում հիմնային ֆոսֆատազայի, պարաք հորմոնի խտության նվազում և 25-հիդրօքսիվիտամին D-ի (25[OH]D) մակարդակի բարձրացում
- Դ. շիճուկում հիմնային ֆոսֆատազայի մակարդակի բարձրացում, պարաք հորմոնի և 25-հիդրօքսիվիտամին D-ի (25[OH]D) խտության նվազում

# ՀԵՊԱՏԻՏՆԵՐ. ՀԻՄԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

## Ներածություն

Հեպատիտ տերմինը բնորոշում է յարդի բորբքային հիվանդությունները, որոնք բաժանվում են երկու հիմնական խմբերի՝ ինֆեկցիոն և ոչ ինֆեկցիոն: Հեպատիտներին բնորոշ է կլինիկական և հյուսվածքաբանական դրսևորումների լայն բազմազանություն՝ թերև ինքնապաքինող տեսակներից մինչև ծանր, պրոգրեսիվող ձևեր, որոնք բերում են յարդային անբավարարության, ցիռոզի կամ յարդաբջջային կարցինոմայի զարգացման:

## Լաբորատոր գնահատում

Սովորաբար յարդը յուրաքանչյուր բորբքային վնասմանը տալիս է նույնանման պատասխան՝ որոշակի տարրերություններով: Վնասումը կարող է լինել գլխավորապես յարդաբջջային (նեկրոտիկ) կամ խոլեստատիկ, եթե հիմնականում վնասվում են լեղածորանները և արյունքում խանգարվում է լեղու հոսքը: Չնայած վնասման՝ յարդային ֆունկցիան միշտ չէ որ տուժում է, և յարդային անբավարարության նշանները կարող են չդրսևորվել, քանի դեռ գրեթե բոլոր հեպատոցիտները չեն քայքայվել: Սպեցիֆիկ լաբորատոր թեստերով հնարավոր է ախտորոշել հեպատիտների տարբեր պատճառները:

## Լյարդաբջջային նեկրոզի մասին վկայող թեստեր

Ասպարտատ-ամինոտրանսֆերազան (ԱՍՏ) և ալանին-ամինոտրանսֆերազան (ԱԼՏ) քայքայված յարդային բջիջներից անցնում են դեպի արյան շրջանառություն՝ թերելով շիճուկում վերջիններիս կոնցենտրացիայի բարձրացմանը: Սովորաբար, եթե դեռ ցիռոզ չի զարգացել, շիճուկի ԱԼՏ-ի մակարդակը գերազանցում է ԱՍՏ-ին: Շիճուկի ԱՍՏ-ի և ԱԼՏ-ի մակարդակները կարող են յարդի սուր վնասմանը զուգահեռ կտրուկ բարձրանալ և այնուհետև նվազել մինչև նորմալ ցուցանիշներ՝ պայմանավորված յարդում նրանց սպառմանք: Քրոնիկ յարդային վնասման շատ

դանդաղ խորացման դեպքում, ինչպես օրինակ կարող է լինել ցիռոզի ժամանակ, շիճուկում ԱԼՏ-ն և ԱՍՏ-ն կարող են լինել նորմայի սահմաններում:

ԱԼՏ-ն համարվում է յարդային վնասման մասին վկայող ավելի սպեցիֆիկ ցուցանիշ, քանի որ այն գլխավորապես գտնվում է հեպատոցիտների ցիտոպլազմայում և ավելի փոքր քանակներով է ներկայացված այլ տեղերում: ԱՍՏ-ն ունի ցիտոզոլային և միտոքոնդրիալ ձևեր և ներկայացված է յարդում, սրտամկանում, կմախքային մկաններում, երիկամներում, գլխուղեղում, ենթաստամոքսային գեղձում, թոքերում, լեյկոցիտներում և էրիթրոցիտներում:

Քանի որ մկաններից ԱՍՏ-ի և ԱԼՏ-ի ձերբագատումը նույնպես կարող է թերել շիճուկում դրանց մակարդակի բարձրացման, անհրաժեշտ է շիճուկում որոշել մկանային ֆերմենտներ կրեատին կինազայի և ալդոլազայի մակարդակները, և նորմալ արյունքների դեպքում նիայն, ԱՍՏ-ի և ԱԼՏ-ի բարձր արժեքները գնահատել որպես յարդային ծագման:

Ամինոտրանսֆերազաների բարձրացման աստիճանը կարող է օգտակար լինել յարդաբջջային և խոլեստատիկ վնասումը տարբերակելու հարցում: ԱԼՏ-ի և ԱՍՏ-ի մակարդակների բարձրացումը նորմայից մինչև 8 անգամ կարող է դիտվել ինչպես յարդաբջջային, այնպես էլ խոլեստատիկ ախտահարման դեպքում, մինչեւ ավելի քան 25 անգամ բարձրացումը հիմնականում բնորոշ է յարդաբջջային ախտահարմանը:

## Խոլեստազի մասին վկայող թեստեր

Խոլեստազի հետևանքով առաջացած լեղու հոսքի խանգարումը կարող է թերել շիճուկի ց-գլյուտամիլտրանսֆերազայի, հիմնային ֆուֆատազայի և կոնյուգացված բիլիռուբինի մակարդակների բարձրացման:

## Լյարդային անբավարարության մասին վկայող թեստեր

Պրոբրոմբինային ժամանակի երկարումը (չնայած վիտամին Կ-ի նշանակմանը) և շիճուկային ալբումինի ցածր մակարդակը յարդի ցածր սինթետիկ ֆունկցիայի մասին վկայող առավել կիրառելի ցուցանիշներն են: Կարևոր է նշել, որ շիճուկի ընդհանուր սպիտակուցը կարող է լինել նորմայի սահմաններում՝ չնայած ալբումինի ցածր մակարդակին, եթե ց գլոբուլինների մակարդակը զգալիորեն բարձրացած է, և ալբումին/ց-գլոբուլին հարաբերակցությունը «շրջված» է: Այս իմվերսիան հիմնականում բնորոշ է առտոհմուն բնույթ ունեցող հեպատիտներին, որոնց բնորոշ է հիպեր-ց-գլոբուլիննեմիան:

## Սպեցիֆիկ լաբորատոր թեստեր

Կան սպեցիֆիկ թեստեր, որոնց միջոցով հնարավոր է պարզել հեպատիտի պատճառը կամ յարդի վնասման բնույթը: Այս թեստերի արդյունքները կարող են նպաստել համապատասխան բուժման ընտրությանը: Տարբեր հեպատիտներին բնորոշ սպեցիֆիկ թեստերը կներկայացվեն «Պատճառները» ենթագլխում:

## Գործիքային և հյուսվածքաբանական քննություններ

Լյարդի ՈՒՁՅ-ի միջոցով կարելի է հայտնաբերել հեպատոնեֆալիան, յարդի ճարպային ներսփռումը, յարդի պարենքինայի ախտահարումները, օրինակ՝ պարենքինային բշտեր, հենմանգիռնա:

Լյարդի ախտահարման գնահատման գործնքնեցում արժեքավոր դեր կարող են ունենալ նաև համակարգչային տոմոգրաֆիան և մագնիս-ռեզոնանսային հետազոտությունը:

Լյարդի բիոպսիան «ոսկե ստանդարտ» է համարվում յարդի գրեթե բոլոր հիվանդությունների ախտորոշման համար: Լյարդի հյուսվածքաբանական քննությունը ոչ միայն կարող է հաստատել հեպատիտների ենթադրյալ պատճառը, այլ նաև արժեքավոր ինֆորմացիա է տալիս բորբոքման և ֆիբրոզի աստիճանի մասին՝ օգնելով բժշկին բուժման ճիշտ մոտեցում ընտրելու հարցում:

## Կլինիկական նշաններ

Հեպատիտի սկիզբը կարող է լինել սուր կամ քրոնիկ: Բնորոշ են ընդհանուր թուլությունը

և ախտրժակի բացակայությունը, ինչպես նաև՝ ստամոքսաղիքային ախտանիշները: Լյարդի չափերի մեծացումը հեպատիտների ամենաբնորոշ և հաճախ միակ դրսուրումն է ֆիզիկական քննության ժամանակ, որին հաջորդում է դեղնուկը: Պորտալ հիպերտենզիայի զարգացման դեպքում սովորաբար հայտնաբերվում է նաև սպիտակումնեգալիա: Եթե հեպատիտի հետևանքով զարգանում են ցիռոզ և յարդային անբավարարություն, ապա կարող է առաջանալ ասցիտ, կերակրափողային և ստամոքսային երակների վարիկոզ լայնացում:

## Սուր հեպատիտ

Սուր հեպատիտներին բնորոշ են «մրսածություն» հիշեցնող գանգատները՝ տենդով, թուլությամբ, մկանացավերով, հոդացավերով, որովայնացավով, որին հաջորդում է դեղնուկի առաջացումը: Խոլեստազը դրսուրվում է դեղնուկով, մեզի գույնի մգացմանը և ախտլիկ կղանքով: Սակայն սուր հեպատիտը կարող է ավելի մեղմ արտահայտվել, և հաճախ դեղնուկը բացակայում է, հատկանի՝ 4 տարեկանից փոքր երեխաների շրջանում: Սուր վիրուսային հեպատիտների ամենաբնորոշ պատճառներն են հեպատիտ A-ի և հեպատիտ E-ի վիրուսները:

Կարևոր է հիշել, որ տենդ ունեցող նորածնի հեպատիտի պատճառը կարող է լինել էնտերովիրուսային վարակը:

## Քրոնիկ հեպատիտ

6 ամսից ավել տևող հեպատիտը համարվում է քրոնիկ և կարող է առաջացնել ցիռոզ, յարդային անբավարարություն և յարդարջային կարցինոմա, վերջինս հազվադեպ է հանդիպում երեխաների շրջանում: Դեպքերի մեծամասնությունը ախտանիշները կարող են բացակայել կամ զարգանալ աննկատ: Քրոնիկ հեպատիտի պատճառի պարզաբանումը կարևոր է պրոգնոզի, բուժման, ինչպես նաև հիվանդության վաղ և ուշ բարդությունների վարման համար: Մանկության շրջանում, օրինակ, հեպատիտի C վիրուսով հարուցված յարդի ախտահարումը հիմնականում թերև է ընթանում և դանդաղ է արողութեավում, իսկ առատություն հեպատիտը կարող է անսպասելիորեն դրսուրվել արյունահոսությամբ՝ որպես մինչ այդ չախտորոշված ցիռոզի կամ յարդային անբավարարության հետևանքը:

## Բարդություններ

Հեպատիտները կարող են առաջացնել ծանր բարդություններ, որոնք պահանջուն են վաղ հայտնաբերում և համապատասխան միջամտություններ: Բժշկական անհետաձգելի իրավիճակներ են սուր էնցեֆալոպաթիան, ցիրոզով պայմանավորված կուգուպաթիան և կերակրափողային արյունահոսությունը: Այլ բարդությունները, ինչպիսիք են թերսնուցումը, քորը և «նվազագույն» էնցեֆալոպաթիան, քրոնիկական են և զարգանում են՝ խորանալով ավելի երկար ժամկետներում:

### Թերսնուցում

Լյարդային դիսֆունկցիա ունեցող երեխաների շրջանում կարևոր խնդիրներից է նաև սնուցումը: Շիճուկում ամոնիակի և ուղեղի վրա տոքսիկ ազդեցություն ունեցող այլ նյութերի խտության նվազեցման նպատակով պետք է սննդակարգուն սահմանափակել սպիտակուցները և նշանակել այդ նյութերը կապող վատ ներծծվող դիսախարիդներ (օր.՝ լակտուլոզա): Բուժական այս միջամտությունը պետք է հավասարակշռել ածխածրերի, ցինկի և ճյուղավորված ամինաթրուների աղեկվատ ներմուծմամբ:

Խոլեստազի հետևանքով լեղու հոսքի խանգարումը առաջացնում է ճարպալույթ վիտամինների (A, D, E, և K) ու լիակիների մալաբսորբցիա, և ցուցված է համապատասխան հավելումների նշանակում:

### Ցիռոզ

Ցիռոզը յարդի տարբեր ախտահարումների տերմինալ փուլուն է, որի արդյունքում կարող է զարգանալ պորտալ հիպերտենզիա:

Ցիռոզի հիմնական և կյանքին վտանգ սպառնացող բարդությունը կերակրափողի վարիկոզ լայնացած երակներից արյունահոսությունն է: Բուժումը ներառում է լիզատուրայի էնդոսկոպիկ տեղադրումը կամ սկլերոթերապիան: Պորտալ հիպերտենզիայի նվազեցման և վարիկոզ երակներից արյունահոսության կանխման համար արյունավետ է շունտերի տեղադրումը. կարետրային սթենտավորման միջոցով (տրանսյուգուլար-ներլարդային պորտոսիստեմիկ շունտ) կամ վիրահատական եղանակով (դիստալ սպլենոռենալ շունտ՝ փայծաղային երակի և ձախ երիկամային

երակի միջև), սակայն ներկայումս գերադասելի վիրաբուժական միջամտություն է համարվում յարդի փոխպատվաստումը:

Լյարդային անբավարարությանը բնորոշ մեկ այլ կլինիկական խնդիր է հանդիսանում ասցիտը: Ասցիտի բուժման համար սովորաբար կիրառվում է երկու միզամուղերի՝ սպիրոնոլակտոնի և ֆուրոսեմիդի համատեղ նշանակումը: Ասցիտիկ հեղուկի սպոնտան ինֆեկցումը լուրջ բարդություն է, և ասցիտ ունեցող ու ջերմող երեխայի մոտ պետք է այն բացառել պարացենտեզի միջոցով: Վարակի միացումը կանխարգելելու նպատակով առաջարկվում է նորֆլոքսացինի ամենօրյա նշանակում:

### Քոր

Քորը գրգռող մի վիճակ է, որը հաճախ է զարգանում խոլեստազի դեպքում: Քանի որ քորի պատճառը դեռ պարզաբանված չէ, ուստի չկան արդյունավետ բուժման մոտեցումներ: Խոստ կարևորվում է խոնավացնող լույսների և կրեմների տեղային կիրառումը մաշկի արտահայտված չորացումից խուսափելու համար: Մասնակի լավացում կարող է դիտվել որոշ դեղամիջոցների բերանացի ընդունման դեպքում, ինչպիսիք են ռիֆամպինը (ըստ պաշտոնական ցուցումների պրեպարատը այս նպատակով նախատեսված չէ) և ուրսոռեզօքսիխոլաքրուն. Երկուսն էլ նվազեցնում են լեղու աղերի ներլարդային կոնցենտրացիան: Բերանացի նալտրեքսոնը ևս արդյունավետ է, սակայն դրա կիրառումը այս նպատակով, ինչպես նաև մինչև 18 տարեկան երեխաների շրջանում, նույնպես արտոնագրված չէ: Խոստ արտահայտված քորը կարելի է որոշ չափով մեղմացնել վիրաբուժական միջամտության (լեղու մասնակի արտաքին շրջանցում) օգնությամբ:

### Էնցեֆալոպաթիա

Էնցեֆալոպաթիան զարգանում է, եթե շիճուկում բարձրանում է ամոնիակի և այլ հնարավոր ուղեղային տոքսինների խտությունը: Այս նյութերը սինթեզվում են նորմալ նյութափոխանակության ընթացքում, սակայն յարդի դիսֆունկցիայի պայմանում խանգարվում են դրանց ծիշտ նյութափոխանակությունն ու արտազատումը:

Բուժման հիմնական նպատակն է նվազեցնել աղիքային բակտերիաների կող-

մից ամոնիակի սինթեզը: Այդ նպատակով կիրառվում են բերանացի ընդունման չներծծվող անտիբիոտիկներ, օր.՝ նեոնիցին կամ ռիֆաքսիմին (թեև դրանց կիրառումը այս ցուցումով, ինչպես նաև մինչև 12 տարեկան երեխաների շրջանում արտոնագրված չէ), կամ լակտուլոզ:

Ենցեֆալոպարիան կարող է ունենալ ակնառու արտահայտություններ, դրսնորվելով ցնցումներով և կոմայով՝ սուր յարդային անբավարարության դեպքում, կամ շատ ավելի աննկատ լինել («նվազագույն յարդային էնցեֆալոպարիա»՝ քրոնիկ յարդային անբավարարության դեպքում,

որի բնորոշ դրսնորումներն են կենտրոնանալու դժվարացումը, մոռացկոտությունը և դպրոցում վատ առաջադիմությունը:

## Պատճառները

Ավագ տարիքի երեխաների շրջանում հեպատիտներն ունենում են տարբեր պատճառներ, որոնք կարող են բաժանվել ինֆեկցիոն և ոչ ինֆեկցիոն խմբերի (այսուակ 1): Վերջինս ներառում է մետաբոլիկ, առևտոիմուն, գենետիկական կամ դեղորայքով հարուցված հեպատիտները: Տարբեր էթիոլոգիայի հեպատիտների բուժման հիմնական մոտեցումները ներկայացված են այսուակ 2-ում:

### Աղյուսակ 1. Սուր և քրոնիկ հեպատիտների պատճառները

	Սուր հեպատիտներ	Քրոնիկ հեպատիտներ
Ինֆեկցիոն	<b>Հեպատիտներ A, E</b> <b>Հեպատիտներ B,C,D (կոինֆեկցիա հեպատիտ B-ի դեպքում)</b> <b>Թիտոմեգալովիրուս</b> <b>Էբշտեյն-Բարի վիրուս</b>	
Ոչ ինֆեկցիոն	<b>Մետաբոլիկ/գենետիկական</b> <ul style="list-style-type: none"> <li>• Հեպատոքնալ թիրոգինեմիա</li> <li>• Միտոքրոնոդիալ հեպատոպարիա</li> <li>• ճարպաթթուների օքսիդացման խանգարումներ</li> <li>• α1-անտիտրիպսինի անբավարարություն</li> <li>• Վիլսոնի հիվանդություն</li> <li>• Պոլիգլանդուլյար համախտանիշ, տիպ 1</li> </ul> <ul style="list-style-type: none"> <li>• Մուկովիսիցիտոզ</li> </ul> <b>Առևտոիմուն հեպատիտ</b> <b>Դեղորայքային հեպատիտ</b>	<b>Ցելիակիա</b> <b>Ոչ ալկոհոլային ստետոհեպատիտ</b>

### Աղյուսակ 2. Հեպատիտների բուժման սկզբունքներն ըստ ախտահարման պատճառի

Հեպատիտ A վիրուսային վարակ	սպեցիֆիկ հակավիրուսային բուժման անհրաժեշտություն չկա, ակտիվ և պասիվ իմունիզացիա կենցաղային կոնտակտի դեպքում
Հեպատիտ B վիրուսային վարակ	ա-ինտերֆերոն և լամիվուդին (երեխաների բուժման համար ԱՄՆ-ի սննդի և դեղորայքի գործակալության (FDA) կողմից ընդունված են միայն այս դեղամիջոցները)
Հեպատիտ C վիրուսային վարակ	պեգիլացված ինտերֆերոն և ռիբավիրին
Հեպատիտ E վիրուսային վարակ	աջակցող բուժում
Էբշտեյն - Բարի վիրուսային վարակ	աջակցող բուժում
Առևտոիմուն հեպատիտ	կորտիկոստերոիդներ և ազարիոպրին
Ցելիակիա	ագլուտենային սննդակարգ
Մուկովիսիցիտոզ	սինպոմատիկ բուժում
α1-անտիտրիպսինի անբավարարություն	աջակցող բուժում
Վիլսոնի հիվանդություն	պղինձ կապող խելատացնող ագենտներ, օր.՝ պենիցիլամին կամ տրիենթին
Դեղորայքով հարուցված	դեղի դադարեցում

## Ինֆեկցիոն հեպատիտներ

### Հեպատիտ A

Հեպատիտ A-ի հարուցիչը ՌՆԹ վիրուս է, որը փոխանցվում է ֆեկալ-օրալ ճանապարհով: Կոնտամինացված հում սնունդը և ջուրը փոխանցնան ամենատարածված ուղիներն են: Կլինիկական ընթացքը կարող է լինել թերեւ և անախտանիշ կամ ծանր ու կայծակնային հեպատիտի տեսքով: Հեպատիտ A վիրուսային վարակը երեխաների շրջանում սովորաբար թերեւ է ընթանում և հանդիսանում է ինքնալավացող վարակ: Այն հաճախ ասիմպտոմատիկ է կամ ուղեկցվում է ստամոքսաղիքային ոչ սպեցիֆիկ վիրուսային վարակներին բնորոշ ախտանիշներով: Ծանր և կայծակնային հեպատիտն առավել բնորոշ է չափահասներին:

Հեպատիտ A-ի վիրուսը երբեք չի բերում քրոնիկ հեպատիտի առաջացման. այն առաջացնում է միայն սուր հիվանդություն:

Այս վարակը սպեցիֆիկ բուժում չի պահանջում: Սովորաբար ձեռնարկվում են օժանդակող միջոցառումներ՝ տենդի և լուծի կապակցությամբ: Չկա որևէ սպեցիֆիկ սննդակարգ, որն եական ազդեցություն կրողնի սուր հեպատիտ A-ի ելքի վրա: Այսպիսով, խորհուրդ չի տրվում հատուկ սննդակարգի նշանակումը, բացառությամբ սարդի ֆունկցիայի ծանր ախտահարման առկայության (օր.՝ կայծակնային սարդային անբավարարություն): Հիվանդները հազվադեպ են հոսպիտալացման կարիք ունենում, բացի կայծակնային սարդային անբավարարության դեպքերի:

Հակա-հեպատիտ A վիրուսային IgM և IgG հակամարմինների որոշումը թույլ է տալիս տարբերակել համապատասխանաբար վերջերս կամ անցյալում տարած ինֆեկցիան: Վիրեմիայի շրջանում հեպատիտ A-ի վիրուսի ՌՆԹ-ն կարող է հայտնաբերվել պոլիմերազային շղթայական ռեակցիայի (ՊՇՈ- PCR) միջոցով:

Հեպատիտ A-ի պատվաստումը կարելի է կիրառել 1-18 տարեկան երեխաների և ռիսկի խմբում գտնվող չափահասների շրջանում: Մի շարք երկրներում հեպատիտ A-ի պատվաստումը խորհուրդ է տրվում այն բոլոր երեխաներին, ովքեր ունեն

յարդի ցանկացած քրոնիկ ախտահարում՝ կանխելու արդեն իսկ ախտահարված յարդի վնասման խորացումը:

ՀՀ-ում վիրուսային հեպատիտ A-ի դեմ պատվաստումն իրականացվում է վարակնան բարձր ռիսկով անձանց շրջանում՝ սկսած 1 տարեկան հասակից (ՀՀ կառավարության 2002 թ. օգոստոսի 15-ի 1300-Ն որոշում):


Մինչև 1 տարեկան երեխաների, ինունորեֆիցիտ կամ յարդի քրոնիկ ախտահարում ունեցող անձանց շրջանում, ինչպես նաև պատվաստման հակացուցումների դեպքում խորհուրդ է տրվում կիրառել ինունօգլոբուլին (IG):

Երեխաները կարող են հաճախել դպրոց կամ մանկան խնամքի այլ հաստատություն հիվանդության արտահայտման սկզբունք 1 շաբաթ անց:

### Հեպատիտ B

Հեպատիտ B-ի վիրուսն (ՀԲՎ) արյան միջոցով փոխանցվող, երկպարույր ԴՆԹ վիրուս է, որը մանկական դեպքերի մեծամասնությունում փոխանցվում է ուղրահայաց (մայր-պողուղ) ճանապարհով: Փոխանցնան հորիզոնական/կենցաղային ուղին համարվում է ավելի հազվադեպ տարբերակ:

Ախտորոշումը հաստատվում է վիրուսի մարկերների հայտնաբերման միջոցով, որոնք պայմանավորված են վիրուսի հակագենային կառուցվածքով (Նկար 1):



**Նկար 1** Վիրիոնը ծածկող սպիտակուցք հայտնի է որպես «մակերեսային անտիգեն» կամ HBsAg: Միջուկային (core) HBcAg անտիգենը վիրուսի ԴՆԹ-ն շրջապատող սպիտակուցք է: HBsAg-ը (enveloped-պարփակված) ծածկում է միջուկային գենից և վկայում է վիրուսի ակտիվ բազմացման՝ ռեալիկացիայի մասին:

Ինքնալավացման դեպքում հիվանդների մեջ նաև շրջանում HBsAg-ն անհետանում է մի քանի շաբաթներից մի քանի ամիսների ընթացքում, որին հետևում է հակա-HBs հակամարմինների առաջացման միջև ընկած կարծ ժամանակահատվածը անվանվում է «պատուհանի» փուլ: «Պատուհանի» փուլում սուր վարակի մասին վկայող միակ չափանիշը IgM դասի հակա-HBs հակամարմիններն են միջուկային անտիգենի դեմ, որոնք բարձր սպեցիֆիկություն ունեն սուր վարակի հաստատման համար: Սակայն IgM դասի հակա-HBs հակամարմինները սովորաբ բացակայում են պերինատալ վարակած երեխաների շրջանում: Հեպատիտ D-ի հանդեպ IgM առկայությունը խսում է հեպատիտ D կոինֆեկցիայի մասին: Քրոնիկ ՀԲՎ-ինֆեկցիայի ժամանակ առկա են

լինում շրջանառող HBs-անտիգեններ և հակա-HBc հակամարմիններ, հազվադեպ առկա են լինում նաև հակա-HBs հակամարմիններ: Եվ՝ հակա-HBs, և հակա-HBc հակամարմինները հայտնաբերվում են ապաքինված անձանց շրջանում, այնինչ միայն հակա-HBs հակամարմինների առկայությունը վկայում է հեպատիտ B վիրուսային վարակի դեմ պատվաստման մասին: Շճուկում HBsAg-ի առկայությունը գուգակցվում է ՀԲՎ-ի բարձր կոնցենտրացիայի և վարակելիության հետ: HBsAg-ի և ՀԲՎ-ի ԴՆԹ-ի որոշումն օգտակար է հակավիրուսային բուժման կարիք ունեցող հիվանդների հայտնաբերման և բուժման արդյունավետության մոնիթորինգի համար: Այսուակ 3-ում ներկայացվում են հեպատիտ B վիրուսի անտիգենների և հակամարմինների հայտնաբերման նպատակով կիրառվող ախտորոշիչ թեստերը:

### Աղյուսակ 3

ՀԲՎ-ի հակածինը կամ հակամարմինը		Կիրառումը
HBsAg	ՀԲՎ-ի մակերեսային անտիգեն	Սուր կամ քրոնիկ վարակի հայտնաբերում Այս անտիգենը կիրառվում է ՀԲՎ-ի պատվաստանյութում:
Հակա- HBsAg	Հակամարմիններ ՀԲՎ-ի մակերեսային անտիգենի նկատմամբ	ՀԲՎ վարակով հիվանդացած և ապաքինված անձանց հայտնաբերում: Հետապատվաստումային ինունիտետի հաստատում:
HBeAg	Հեպատիտ B-ի անտիգեն	Վարակված անձանց հայտնաբերում, ովքեր ունեն վարակելիության բարձր վտանգ:
Հակա- HBeAg	Հակամարմիններ հեպատիտ B-ի անտիգենի հանդեպ	Վարակված անձանց հայտնաբերում, ովքեր ունեն վարակելիության ցածր վտանգ:
Հակա- HBc	Հակամարմիններ HBcAg-ի* հանդեպ	Սուր, ապաքինված կամ քրոնիկ ՀԲՎ-վարակով անձանց հայտնաբերում: Պատվաստումից հետո ի հայտ չի գալիս:
IgM հակա-HBc	IgM դասի հակամարմիններ HBcAg-ի հանդեպ	Սուր կամ վերջերս ապաքինված ՀԲՎ-վարակ (ներառյալ HBsAg բացասական հիվանդները վարակի «պատուհանի» փուլում)

HBcAg-ՀԲՎ-ի միջուկային (core) անտիգեն, HBeAg-ՀԲՎ-ի պարփակված (enveloped) անտիգեն, IgM - ինունոգլոբուլին M

\*Դեռևս գոյություն չունեն թեստեր HBcAg-ի հայտնաբերման համար

Հյուների սկրինինգը հեպատիտ B-ի հայտնաբերման նպատակով, թույլ է տալիս իրականացնել հեպատիտ B-դրական մարդերից ծնված նորածինների մոտ վերջինիս կանխարգելունը: Կանխարգելունն իրականացվում է կյանքի առաջին 12 ժամերի ընթացքում նորածինների պասիվ (IgG) և ակտիվ (պատվաստանյութի առաջին դեղաչափը) ինունիգացիայի համակցումով, որին հաջորդում է հեպատիտ B-ի համալիր պատվաստումը ընդունված սխեմայով:

ՀՀ-ում մանկական ազգաբնակչության հեպատիտ B-վարակի կանխարգելման, ինչպես նաև՝ ուղղահայաց ճանապարհով վարակվելու բարձր ռիսկով նորածինների հայտնաբերման և վարման նպատակով իրականացվում են միջոցառումներ հետևյալ կարգով.

- Բոլոր նորածինները կյանքի առաջին 24 ժամվա ընթացքում պատվաստվում են հեպատիտ B-ի դեմ: Այնուհետև՝ 6, 10 և 14 շաբաթական հասակում հեպատիտ B-ի դեմ պատվաստումները շարունակվում են եռանվագ հնգավալենտ /ԱԿԴՓ-ՎՀԲ-ՌԻԲ/ պատվաստանյութով:

- Առողջության առաջնային պահանձնան (ԱՍՊ) կազմակերպություններում իրականացվում է հղիների հետազոտություն հեպատիտ B-ի նկատմամբ՝ արագ (էքսպրես) մեթոդով: Դրական արդյունքներով հղիների արյան նմուշներն ուղարկվում են ՀՀ առողջապահության նախարարության Յիվանդությունների Վերահսկման և Կանխարգելման կենտրոնի ռեֆերենս լաբորատորիա՝ ինունֆերմենտային ներողով ախտորոշումը հաստատելու համար:
- Հեպատիտ B-ով վարակված մորից ծնված նորածնին, ի լրացումն հեպատիտ B-ի դեմ պատվաստմանը, ցուցված է նաև ինունգուլորուլինի (HBIG) նշանակում (պասիվ կանխարգելում): 40 ՄՄ 1կգ քաշի համար, հաշվարկի ամփոփության դեպքում՝ 180-200 ՄՄ:
- Եթե ԱՍՊ կազմակերպությունում հղին արյան նմուշի արագ մեթոդով հետազոտման արդյունքը դրական է, սակայն ռեֆերենս լաբորատորիայում այն չի հետազոտվել, ապա ծննդատանը HBIG –ի ներարկումը նորածնին կատարվում է մոր գրավոր համաձայնությամբ:
- Եթե մայրը չի հետազոտվել հեպատիտ B-ի նկատմամբ, ապա նորածնի պատվաստումները կատարվում են համաձայն Պատվաստումների ազգային օրացույցի և ինունգուլորուլինի ներարկում չի կատարվում:

Պետք է իիշել, որ կրծքով կերակրումը չի բարձրացնում վարակի փոխանցման ռիսկը: Կյանքի վաղ շրջանում ուղղահայց փոխանցման միջոցով հեպատիտ B-ով ինֆեկցումը սովորաբար բերում է քրոնիկացիայի (90-95%): Ավելի ուշ վարակվելու դեպքում միայն 5-10% դեպքերում է զարգանում քրոնիկ հեպատիտ. հիվանդների 90-95%-ը ձերբազատվում է վիրուսից: Ինունակտիվ հեպատիտ B-ի բուժումն իրականացվում է ինտերֆերոնով կամ նուկլեոզիդային անալոգներով:

### Հեպատիտ C

Հեպատիտ C-ի հարուցիչն արյան միջոցով փոխանցվող ՈՆԹ վիրուս է, որն ունի վեց գլխավոր գենոտիպեր: Առաջին գենոտիպն ամենաագրեսիվն է և առավել կայունը հակավիրուսային բուժման նկատմամբ: Վիրուսային գենոմի սպոնտան նուտացիաների բարձր հաճախականության պատճառով դեռևս չի հաջողվել ստանալ արդյունավետ պատվաստանյութ:

Հեպատիտ C վիրուսային վարակը հայտնաբերվում է հակա-հեպատիտ C վիրուսային հակամարմինների որոշմամբ և հաստատվում է ՊՇՌ մեթոդով շիճուկում հեպատիտ C վիրուսի ՈՆԹ-ի հայտնաբերմամբ: Երեխաները գլխավիրապես վարակվում են վիրուսի ուղղահայց՝ մայր-պտուղ փոխանցման միջոցով, իսկ չափահասների շրջանում տարածված ուղին ներարկումներն են թմրանոլության դեպքում:

Վիրեմիա ունեցող մորից վարակի ուղղահայց փոխանցման հավանականությունը 4-7% է: Հեպատիտ C վիրուսային վարակի փոխանցումը կարող է իրականանալ ներարգանդային կյանքում կամ ծննդաբերության ընթացքում: Կեսարյան հատման արդյունավետության մասին վկայող տվյալները հակասական են հեպատիտ C վիրուսի փոխանցման կանխարգելման հարցում (անկախ ՄԻԱՎ կոինֆեկցիայի առկայությունից): Հեպատիտ C վիրուսի և ՄԻԱՎ կոինֆեկցիան բարձրացնում է մորից պտղին վարակի փոխանցման հավանականությունը, եթե մայրը արդյունավետորեն չի բուժվել ՄԻԱՎ-ի դեմ:

Նորածնը համարվում է ինֆեկցված, եթե հեպատիտ C վիրուսի ՈՆԹ-ն դրական է լինում շիճուկի 2 և ավելի նմուշներում: Ներարգանդային վարակման մասին վկայում է հեպատիտ C վիրուսի ՈՆԹ-ի հայտնաբերումը մինչև կյանքի 3-րդ օրը: Ինչիցեւ, հեպատիտ C վիրուսի ՈՆԹ-ի մակարդակը հասնում է նշանակած թվերի ծնվելուց մի քանի շաբաթ անց, ինչը խոսում է այն մասին, որ հեպատիտ C-ին ավելի բնորոշ է պերինատալ փոխանցումը, քան ներարգանդային ինֆեկցումը:

Խորհուրդ է տրվում իրականացնել հեպատիտ C վարակված մորից ծնված երեխայի սկրինինգ՝ որոշելով շիճուկային հակա-հեպատիտ C հակամարմինները 18 ամսականում, քանի որ այս ժամանակ մորից պասիվ ճանապարհով ձեռք բերված հակամարմինները երեխայի շիճուկում այլևս չկան:

Երեխաների մեծ մասի մոտ հեպատիտ C վիրուսային հեպատիտը թերև է ընթանում և դանդաղ է պրոգրեսիվում: Հեպատիտ C-ով երեխաների մեծ մասն ասիմպտոմատիկ են կամ ունենում են թերև արտահայտված ոչ սպեցիֆիկ ախտանիշներ: Կլինիկական ախտանիշներն ի հայտ են գալիս կյանքի առաջին 4 տարիներին երեխաների մոտավորապես 20%-ի շրջանում: Ամենահաճախ հանդիպող նշանը հեպատոմեգալիան է (դիտվում է հեպատիտ C ինֆեկցված անհատների 10%-ի մոտ):

Երեխաների շրջանում հեպատիտ C-ի ինքնալավացման հավանականությունը բարձր է պարկնտերալ վարակման դեպքում և կարող է հասնել 35-45%-ի մինչև դեռահասության շրջանը: Մինչդեռ ուղղահայց փոխանցման դեպքում ինքնալավացումը կախված է գենոտիպից և տատանվում է 2.4%-25%-ի սահմաններում: Գենոտիպ 3-ի դեպքում այդ

հավանականությունն ավելի բարձր է, քան գենոտիպ 1-ի դեպքում: 4 տարեկանից հետո ինքնալավացումը քիչ հավանական է:

Հակավիրուսային բուժման անհրաժեշտությունը յուրաքանչյուր դեպքի համար որոշվում է անհատականորեն: Բուժումը ցուցված չէ մինչև 3 տարեկան հասակը՝ ելնելով անվտանգության նկատառումներից և հնարավոր ինքնալավացման պատճառով: Բուժումն իրականացվում է պեզիլացված ինտերֆերոնով և ռիբավիրինով:

### Հեպատիտ D

Հեպատիտ D վիրուսի վարակելիությունը կախված է հեպատիտ B վիրուսային վարակի առկայությունից: Հեպատիտ D ինֆեկցիան նաև կարող է ուղղակիորեն փոխանցվել արյան միջոցով կամ սեռական ճանապարհով՝ դրանով իսկ խիստ ծանրացնելով լարող առկա ախտահարումը HBsAg-դրական անհատի մոտ: Բուժումն ինտերֆերոնն է:

### Հեպատիտ E

Հեպատիտ E վիրուսը փոխանցվում է ֆեկալ-օրալ ճանապարհով: Այն կարևոր առողջապահական խնդիր է, հատկապես զարգացող երկրներում, որտեղ գրանցվել են վարակի բռնկումներ: Քրոնիկ հեպատիտ E-վիրուսային վարակը հազվադեպ է հանդիպում, սակայն կարող է դիտվել ճնշված ինունիտետ ունեցող հիվանդների մոտ: Հակա-հեպատիտ E IgM և IgG հակամարմինները թույլ են տալիս որոշել վերջերս կամ անցյալում տարած ինֆեկցիան: Հեպատիտ E-ի ՈՆԹ-ն կարելի է որոշել ՊՇՈ միջոցով՝ վիրեմիայի շրջանում: Բուժումը միայն սիմպտոմատիկ է: Վերջերս ստացած պատվաստանյութը դեռևս հասանելի չէ և գտնվում է փորձարկումների փուլում:

### Դերայես վիրուսներ

Եթշտեյն-Բարի վիրուսը (ԵԲՎ) և ցիտոմեգալովիրուսը (ՑՄՎ) մարդու հերպես վիրուսների ընտանիքին պատկանող ՂՆԹ վիրուսներ են: Փոխանցվելով թքի միջոցով՝ ԵԲՎ-ն առաջացնում է ինֆեկցիոն մոնոնուկենոց, Բերկիտի լիմֆոմա և լիմֆոպրոլիֆերատիվ հիվանդություններ՝ ինուն համակարգի խանգարումներ ունեցող անձանց շրջանում: Հեպատիտը սովորաբար ի հայտ է գալիս ԵԲՎ սուր կամ քրոնիկ վարակի դեպքում և սովորաբար դրսևորվում է հեպատոմեգալիայի կամ շիճուկում լար-

դային ֆերմենտների բարձրացումով, հազվադեպ այն ընթանում է սուր կայծակնային լարդային անբավարության ձևով:

ՑՄՎ-ը փոխանցվում է արյան, արտազատուկների կամ փոխառվաստված օրգանների միջոցով: Ուղղահայաց փոխանցումը կարող է առաջացնել ծանր բնածին ինֆեկցիա: Զեռքբերովի ինֆեկցիաները սովորաբար ասինպտոնատիկ են, սակայն կարող են առաջացնել ՑՄՎ հեպատիտ, ՑՄՎ մոնոնուկենոց կամ ԵԲՎ -բացասական ինֆեկցիոն մոնոնուկենոցի համախտանիշ, որը նման է ԵԲՎ վարակին:

Հասարակ հերպեսի 1-ին տիպի վիրուսը կարող է առաջացնել սուր հեպատիտ ցանկացած տարիքում և պահանջում է ացիկլովիրի անհապաղ նշանակում: Մոնոնուկենոզի արագ թեստը կարող է կիրառվել ԵԲՎ վարակի սկրինինգի համար: Կասկածելի արդյունքների դեպքում կարելի է որոշել IgM-ը, IgG-ը (վիրուսի կապսիդի անտիգենի հանդեպ) և կորիզային անտիգենները, ինչպես նաև ԵԲՎ-ի ՂՆԹ-ն՝ ՊՇՈ հետազոտությամբ: Վիրուսային հեպատիտների ախտորոշման նպատակով կիրառվում են նաև հակա-ՑՄՎ IgM, IgG- հակամարմինների որոշումը, հեմոկուլտուրան ՑՄՎ-ի համար, ՊՇՈ-ը ՑՄՎ ՂՆԹ-ի հայտնաբերման համար: Հակավիրուսային դեղամիջոցները ցուցված են ծանր դեպքերում: Չնայած սահմանափակ արդյունավետությանը, առավել հաճախ կիրառվում է գանցիկլովիրը:

### Ոչ ինֆեկցիոն հեպատիտներ

#### Առտոդիմուն հեպատիտ (ԱԻԴ)

ԱԻԴ-ը ծանր և պրոգրեսիվող հեպատիտ է, որի դեպքում լարող առտոդիմուն բորբոքյան ռեակցիաների թիրախ է:

Հիվանդությունը սովորաբար ախտորոշվում է՝ ժմատելով հեպատիտների այլ պատճառները, և ենթադրվում է հիպեր-γ-գլոբուլինմիայի կամ շրջանառող առտոհակամարմինների առկայության դեպքում: ԱԻԴ-ի մասին են վկայում այն դեպքերը, երբ հիպեր-γ-գլոբուլինմիայով հիվանդի մոտ հեպատիտ նշանները/ախտանիշներն ընթանում են բոլոր հակավիրուսային մարկերների բացակայության պայմանում:

Քանի որ առտոդիմարմինները IgG դասի են, շիճուկում դրանց բարձր տիտրերը պատասխանատու են հիպեր-γ-գլոբուլինմիայի համար: ԱԻԴ-ի հետ ասոցացվում են

առևտոհակամարմինների երեք իմմնական խմբեր՝ հակակորիզային հակամարմիններ (ANA), հակամարմիններ հարթ մկանների նկատմամբ (ASMA), միկրոսումալ հակամարմիններ յարդի և երիկամների համրեա (LKM առևտոհակամարմիններ): Կորիզային, հարթ մկանների և միկրոսումալ անտիգեններն ունեն բարձր հետերոգենություն:

Ըստ շիճուկում հայտնաբերվող հակամարմինների՝ տարբերում են յուվենիլ առևտոհմուն հեպատիտի 2 տիպեր՝ ԱԻՀ տիպ 1 և ԱԻՀ տիպ 2: ԱԻՀ տիպ 1-ին բնորոշ է ASMA և/կամ ANA-ի, իսկ ԱԻՀ տիպ 2-ին՝ հակա LKM հակամարմինների առկայություն: Երկու տիպերի դեպքում էլ հիվանդությունը գերակշռում է իգական սեռի շրջանում: Մանկական առևտոհմուն հեպատիտների համաժարակաբանությունն անհայտ է, սակայն տիպ 1-ը կազմում է բոլոր դեպքերի 2/3-ը և իմմնականում ի հայտ է գալիս դեռահասների շրջանում, այնինչ տիպ 2-ը հանդիպում է ավելի վաղ հասակում և անգամ մինչև 1 տարեկանը: ԱԻՀ-ի 2-րդ տիպը բնորոշվում է սուր սկզբով և սովորաբար ուղեկցվում է IgA-ի անբավարարությամբ, այնինչ ախտանիշների տևողությունը մինչև ախտորոշումը, կլինիկական նշանները, առևտոհմուն հիվանդությունների ընտանեկան անամնեզը, համակցված առևտոհմուն հիվանդությունների առկայությունը, բուժման արդյունավետությունը և ուշ կանխատեսումը նույնն են 2 խմբերում:

Դարթ մկանների նկատմամբ հակամարմինների առաջացումը դիտվում է նաև վիրուսային հեպատիտների դեպքում, եթե ASMA-ն փոխազդում է մերձջաղային տարբեր բաղադրիչների հետ: Սակայն, եթե արյան շիճուկում որոշվում է ASMA-ի բարձր խոտություն, և այդ հակամարմինները ուղղված են ակտիվային թելիկների (F-ակտին) հանդեպ, ապա ամենայն հավանականությամբ հիվանդությունը ԱԻՀ-ն է:

LKM թիրախային անտիգենները յարդային մետաբոլիզմի ֆերմենտներ են, որոնք մասնակցում են էնտրոգեն միացությունների և քսենօբիոտիկների թունազերծմանը:

Առավել հաճախ հայտնաբերվում են LKM-1 առևտոհակամարմինները, որոնք ախտորոշիչ են համարվում ԱԻՀ-ի 2-րդ տիպի համար՝ չնայած կարող են ի հայտ գալ նաև վիրուսային C հեպատիտի դեպքում: Հեպատիտ C վիրուսի հետ չհամակցված 2-րդ տիպի ԱԻՀ-ը դասակարգվում է որպես 2A տիպ, և բուժման սկզբունքն իմունոսուլյատիվ է, իսկ հեպատիտ C վիրուսի հետ համակցված 2-րդ տիպի ԱԻՀ-ը դասակարգվում է որպես 2B տիպ և բուժվում է հակավիրուսային պրեպարատներով: Ավե-

լի հազվադեպ 2-րդ տիպի ԱԻՀ-ի դեպքում կարող են հայտնաբերվել յարդի ցիտողլային հակամարմիններ՝ առանձին կամ համակցված LKM-1 հակամարմինների հետ:

Յնարավոր են նաև ԱԻՀ-ի «հակամարմինքացասական» դեպքեր: Լյարդի բիոպսիայով հայտնաբերվում են բնորոշ պլազմատիկ բջիջների ինֆիլտրացիա և իմունոգլոբուլինային ներառուկներ: Այս դեպքում հիվանդությունը պատասխանում է իմունոսուլյատիվ բուժմանը: Ինչևէ, դասական շիճուկային հակամարմինները չեն հայտնաբերվում իիվանդության վաղ շրջանում և կարող են ի հայտ չգալ անգամ հիվանդության հետագա ընթացքի ժամանակ:

Լյարդի բիոպսիան անհրաժեշտ է իրականացնել մինչ կորտիկոստերոիդներով կամ իմունոսուլյատիվ միջոցներով բուժումն սկսելը:

Բուժումն անհրաժեշտ է սկսել որքան ինարավոր է վաղ՝ հիվանդության առաջընթացը կանխելու նպատակով: Հաճախ կիրառվում է պրեդնիզոլոն, որին միացվում է ազարիապրին:

Չնայած ԱԻՀ-ի ախտորոշման ժամանակ դեպքերի 44-80% դեպքերում արդեն իսկ առկա է լինում ցիտոզ, սակայն մահացությունը ցածր է, և երեխաների մեծ մասը երկարատև բուժման շնորհիվ լինում է կլինիկորեն կայուն, կյանքի բավարար որակով:

Ցելիակիան կամ գյուտենային անհանդուրժողականությունը հաճախ ուղեկցվում է մեղմ ընթացող քրոնիկ առևտոհմուն հեպատիտով: Պատճառը պարզաբանված չէ, սակայն ենթադրվում է, որ բարակ աղիների լորձաթաղանթի՝ գյուտենով պայմանավորված բորբոքումը նպաստում է էնդոքտին տոքսիկ միացությունների ձևավորմանը, որոնք ել դրականային համակարգով ներթափանցում են յարդ: Լյարդի բորբոքումը սովորաբար պատասխանում է ազյուտենային սննդակարգի ներմուծմանը: Փոքրարիկ դեպքերում ցելիակիան կարող է համակցվել ԱԻՀ-ի հետ, այս դեպքում պահանջվում է ստերոիդներով կամ իմունոսուլյատիվ միջոցներով բուժումը համակցել ազյուտենային սննդակարգի հետ: Քանի որ ցելիակիայի աղիքային ախտանիշները կարող են ակնառու չլինել յարդի ախտահարման ժամանակ, ուստի անհրաժեշտ է կատարել ցելիակիայի շճարանական քննություններն այն բոլոր երեխաներին, որոնց մոտ առկա է շիճուկային

ամինոտրանսֆերազաների անբացատրելի բարձրացում կամ ախտորշվել է ԱԻՀ: 8Ելիակիայի սկրինինգն իրականացվում է՝ որոշելով շհճուկային հակաէնդոմիսալ (antiendomysial) հակամարմինները և հյուսվածքային տրանսգլյուտամինազները:

Աիշ-ը կարող է դրսելորվել նաև որպես  
աղիների բորբոքային հիվանդությունների  
արտադիքային դրսելորում: Աղիների բոր-  
բոքային հիվանդությունները համակցվում  
են նաև առաջնային սկլերոզացնող խո-  
լանգիտի հետ: Աղիների բորբոքային հի-  
վանդության ախտանիշները սովորաբար  
արդեն առկա են լինում հեպատոքիլիար  
ախտահարման ախտորոշման ժամանակ:  
Բուժումը նույն է, ինչ Աիշ-ի դեպքում:

## ԳԵՐԵՏԻԿԱԿԱՆ ԻԵՊԱՏԻՄԵՐ

**Վիլսոնի հիվանդությունը** (ՎՀ) պղնձի նյութափոխանակության գենետիկական խանգարում է, որը մանկական հասակում դրսևորվում է հիմնականում միայն շիճուկային ամինոտրանսֆերազաների մակարդակի բարձրացնամբ: Յեպատիտի գուգակցումը շիճուկային ցերուլոպլազմինից ցածր և մեզում պղնձի բարձր մակարդակների հետ հիմնականում վկայում է ՎՀ-ի մասին: Ենդքային լամպով աչքերի հետազոտման ժամանակ հայտնաբերված՝ ծիածանաթաղանթը շրջապատող մուգ պիգմենտային օլերը (Կայզեր-Ֆլեյշերի օղակներ) խոսում են ՎՀ-ի մասին, սակայն դրանք հազվադեպ են դիտվում երեխաների շրջանում: Վիլսոնի հիվանդության ռեպրում նախնական սկրինինգ թեստը շիճուկային ցերուլոպլազմինից որոշումն է, որի մակարդակը նվազած է լինում հիվանդների 85%-ի շրջանում: Հիվանդները պետք է զննվեն նաև ակնարույժի կողմից՝ Կայզեր-Ֆլեյշերի օղակների հայտնաբերման համար: Եթե ցերուլոպլազմինի մակարդակը նորմալ է, և չկան Կայզեր-Ֆլեյշերի օղակներ, սակայն դեռևս պահպանվում է Վիլսոնի հիվանդության կասկածը, ապա հաջորդքայլը պղնձի քանակական որոշումն է 24 ժամյա մեզում, որի ավելի քան 100մկգ/օրը էրսկրեցիան վկայում է հիվանդության մասին: Լյարդի բիոպսիայով կարող են հայտնաբերվել տարբեր փոփոխություններ՝ թերև հեպատիտին բնորոշմիկրոստեատոզից մինչև ծանր ցիռոզ: Ախտորոշման «ոսկե ստանդարտը» յարդում պղնձի բարձր կոնցենտրացիան է: Պարզվել է ՎՀ-ի գենը, սակայն խորհուրդ չի տրվում այն կիրառել ախտորոշման նպատակով՝ պայմանավորված մուտացիաների մեջ քանակով: Բուժումն իրականացվում է պրինձը խելատացնող դեղամիջոցներով (օր.՝ տրիենոտին կամ պենիցիլամին) կամ պղնձի ներծծումը սենթից կանխելու նպատակով ցինկի պրեպարատներով:

Մուկովիսիցիդոզն առևտոսում ռեցեսիվ հիվանդություն է՝ կապված 7-րդ քրոմոսոմում գտնվող CFTR (**Cystic fibrosis transmembrane regulator**՝ մուկովիսիցիդոզի բաղանթային կարգավորիչ) գենի մոլուստացիաներով, որոնք կոդավորում են ցիլիկ ադենոզին մոնոֆոսֆատ կախյալ ջլիդիդային անցուությունը: Չնայած հիվանդության ամենաբնորոշ դրսերումը շնչառական համակարգի ախտահարումն է և ենթաստամոքսային գեղձի անբավարարությունը, սակայն բնորոշ է նաև յարդի ախտահարում՝ պայմանավորված ներյարդային լեղուղիներոց խցանող լեղու օջախային կուտակմամբ: Մուկովիսիցիդոզը ունեցող երեխաների յարդի ախտահարումը հիմնականում ընթանում է խոլեստատիկ վնասաման ձևով, որին բնորոշ է եղինոնֆիլային կուտակումների առաջացումը ներյարդային լեղուղիներում: Լյարդի ախտահարումը սովորաբար սկսվում է շիճուկային ամինոտրամսֆերազաների մակարդակի բարձրացումով, բայց այն դանդաղորեն հարածում է մինչև բիլիար ցիոռոց՝ պորտալ հիպերտենզիայով և կարող է լինել մահվան պատճառներից մեկը այս հիվանդության դեպքում: Քրտինցիում ջլիդիդների խտության շեղումները ենթադրում են մուկովիսիցիդոզի մասին, և հիվանդությունը սովորաբար հաստատվում է գենետիկական հետազոտությամբ՝ ամենատարածված մոլուստացիաների հայտնաբերումով: Գոյություն չունի մուկովիսիցիդոզով պայմանավորված յարդային հիվանդության բուժում՝ չնայած ուրսողեզրությունների մակարդակում նվազեցնում է շիճուկային ամինոտրամսֆերազաների մակարդակը:

1-ին տիպի պոլիգանորովյար համախտանիշը (ԱՊԴ-1) առ տոսում ռեցեսիվ հիվանդություն է, որը պայմանավորված է 21-րդ դրույտունուն գտնվող առտոհինուն կազմակրոհից գենի (կողավորում է տրանսկրիպցիայի գործոնները) մուտացիայով: Կիրիկորեն դրսևորվում է մանկության տարբեր շրջաններում և ըստգրկում է հարվահանագեղձերի և մակրիկամների առտոհինուն հիվանդությունները, քրոնիկ մաշկալորձաբաղանքային կանոնիորդը և էպոոքերմայլ դիստրոֆիան: 20% դեպերում յարդի ախտահարումն ընդգրկվում է համախտանիշի մեջ՝ որպես ԱթՀ կամ տուր լյարդային անբավարույթուն, որը ևս կարող է մահվան պատճառ հասնիսանալ: Շիճուկի լյարդային միկրոսունդ հակամարդիները, դրոնը փոփագրում են ցիստրոֆոն P4501A2-ի հետ, բարձր սպեցիֆիկություն ունեն ԱՊԴ-1-ի հետ համակցված ԱթՀ-ի համար և հնարավորություն են տալիս տարբերակել այն այլ LKM դրական հեպատիտներից: Բուժման իրականացվում է հիմնուուարեկիվ դեղամիջոցներով:

Մեծ է սուր յարդային անբավարության պատճառ հանդիսացող նյութափոխանակության բնածին խանգարումների ցանկը, որոնք չեն քննարկվի այս հոդվածում: Ամենատարածված մետաբոլիկ խանգարումներից են հեպատոռենալ թիրոզինենիան, միտոքրոնոդրիալ հեպատոպարիան և ճարպաթթուների օքսիդացման դեֆիցիտը:

### **Դեղորայքային հեպատիտներ**

Դեղորայքային հեպատիտները բաժանվում են 2 հիմնական ենթախմբերի: Դեղերը կարող են ուղղակի տոքսիկ ազդեցություն ունենալ յարդի վրա կամ կարող են նապատել ինունոալերգիկ ԱԻՀ-ի առաջացմանը: Առաջին դեպքում յարդի վնասումը սովորաբար դեղաչափ կախյալ է և կախված չէ նախատրամադրվածությունից, իսկ դեղորայքային ԱԻՀ-ը ախտահարում է միայն ժառանգականորեն նախատրամադրված անձանց, կախված չէ դեղաչափից և սովորաբար հետ է զարգանում դեղորայքի դադարեցումից հետո: Ացետամինոֆենն առաջացնում է հեպատիտ ուղղակի վնասման մեխանիզմով, իզոնիազիդը և մեթիլոֆան նախատրամադրվածություն ունեցող անձանց շրջանում կարող են առաջացնել ինունոալերգիկ հեպատիտ: Ինունոալերգիկ պրոցեսների դեպքում դեղորայքի մետաբոլիզմին նաև կազող ցիտոքրոմ P450 (CYP) ֆերմենտն ի հայտ է գալիս առևտունությունի դերում (CYP2C9, CYP3A4, CYP2E1): Խթանելով սպեցիֆիկ LKM առևտունությունը սինթեզը: Ախտորոշման համար առանցքային է դեղորայքի ընդունման անամնեզը: Բուժումը պատճառ հանդիսացող դեղի ընդունման դադարեցումն է: Եթե առևտունուն դեղորայքային հեպատիտը չի պատասխանում դեղորայքի դադարեցմանը, կարող է պահանջվել ԱԻՀ-ի բուժում:

### **Ամփոփում**

- Հեպատիտներն ունեն բազմաթիվ պատճառներ, և քանի որ բուժումը գալիքը ներկայում է՝ կախված սպեցիֆիկ ախտորոշումից, անհրաժեշտ է իրականացնել կանոնակարգված հետազոտություն՝ հիվանդության պատճառը հայտնաբերելու և բուժումն սկսելու համար:

- Մինչ շիճուկային ԱԼՏ-ի և ԱՍՏ-ի բարձրացման պատճառը յարդային համարելը, անհրաժեշտ է պարզել, որ շիճուկային կրեատինիկինազայի և ալդոլազայի մակարդակները նորմայի սահմաններում են:

- Պրոթրոմբինային ժամանակի երկարումը (չնայած վիտամին K-ի նշանակմանը) և ցածր շիճուկային ալբումինը յարդի ցածր սինթետիկ ֆունկցիայի կարևորագույն ցուցանիշներն են:

- Շիճուկի ընդհանուր սպիտակուցը կարող է նորմայի սահմաններում լինել՝ չնայած ալբումինի ցածր մակարդակին, եթե ց-գլոբուլինները զգալիորեն աճում են և «շրջվում» է ալբումին/ց-գլոբուլիններ փոխհարաբերությունը:

- Հեպատիտների բարդությունները կարող են անհետաձգելի լինել, ինչպես օրինակ՝ կոագուլոպարիա, կերակրափողային արյունահոսություն կամ սուր էնցեֆալոպարիա:

- Լյարդի բիոպսիան «ոսկե ստանդարտ» է համարվում յարդի գրեթե բոլոր հիվանդությունների ախտորոշման համար:

- Լյարդի քրոնիկ ախտահարումով բոլոր երեխաներին ցուցված է հեպատիտ A-ի ռես պատվաստում:

- Կրծքով սնուցումը չի բարձրացնում հեպատիտ B-ի փոխանցման ռիսկը:

### **Գրականություն**

- Maria Grazia Clemente and Kathleen Schwarz - Hepatitis: General Principles.**  
- Pediatrics in Review August 2011; Vol. 32; pp. 333-340
- Migli-Vergani G. et al. - Autoimmune Hepatitis: Invited Review.**  
- Journal of Pediatric Gastroenterology and Nutrition August 2009; Vol. 49; pp. 158-164
- Wirth S. et al. - Guidance for Clinical Trials for Children and Adolescents With Chronic Hepatitis C - Clinical guideline.**  
- Journal of Pediatric Gastroenterology and Nutrition February 2011; Vol. 52; pp. 233-237
- Mohan et al. - Chronic Hepatitis C Virus Infection in Children: Invited Review.**  
- Journal of Pediatric Gastroenterology and Nutrition February 2010 Vol. 50; pp. 123-131
- Murray K. et al. - Chronic Hepatitis.**  
- Journal of Pediatric Gastroenterology and Nutrition August 2008; Vol. 47; pp. 225-233
- Ruben E Quirgs-Tejeira - Overview of hepatitis A virus infection in children.**  
available at <http://www.uptodate.com>.  
Updated: January 19, 2011
- Marshall M. Kaplan - Approach to the patient with abnormal liver function tests.**  
available at <http://www.uptodate.com>.  
Updated: February 3, 2011
- Paul T. Giboney - Mildly Elevated Liver Transaminase Levels in the Asymptomatic Patient.**  
- American Family Physician March 2005; Vol. 71; pp. 1105-1110
- American Academy of Pediatrics - Hepatitis B. In: Red Book: 2009 Report of the Committee on Infectious Diseases, 28th ed, pp.337-356.**  
available at <http://www.aap.org>.

## Դարցեր ինքնազմահատման համար.

### 6. Նշված լաբորատոր ցուցանիշները բնորոշ են խոլեստազին, բացի.

- Ա. շիճուկում ց-օպուտամիլտրանսֆերազայի բարձրացում
- Բ. շիճուկում հիմնային ֆոսֆատազայի բարձրացում
- Գ. բիլիոռիբինի բարձրացում ուղղակի ֆրակցիայի հաշվին
- Դ. բիլիոռիբինի բարձրացում անուղղակի ֆրակցիայի հաշվին

### 7. Լյարդային սինթետիկ ֆունկցիայի նվազման մասին վկայող թեստ է հանդիսանում.

- Ա. պրոթրոմբինային ժամանակի երկարումը
- Բ. շիճուկային ալբումինի ցածր մակարդակը
- Գ. ԱԼՏ-ի և ԱՍՏ-ի մակարդակի բարձրացումը
- Դ. ճիշտ են Ա և Բ տարբերակները

### 8. Քրոնիկ հեպատիտի բարդություններից է.

- Ա. լյարդի ցիռոզը
- Բ. լյարդային անբավարարությունը
- Գ. լյարդաբջային կարցինոման
- Դ. բոլոր վերը նշվածները

### 9. Խոլեստազի հետևանքով առաջացած քորի բուժման վերաբերյալ ճիշտ են բոլոր պնդումները, բացի.

- Ա. ցուցված է խոնավացնող լոսյոնների և կրեմների տեղային կիրառում
- Բ. մասնակի լավացում կարող է դիտվել ուրսոդեօքսիխոլաթթվի բերանացի ընդունման դեպքում
- Գ. կիրառվում են հակահիստամինային պրեպարատներ
- Դ. դեռևս չկան քորի բուժման արդյունավետ միջոցներ

### 10. Նշվածներից ո՞ր պնդումն է սխալ.

- Ա. լյարդի բիոպսիան «ոսկե ստանդարտ» է համարվում լյարդի գրեթե բոլոր հիվանդությունների ախտորոշման համար
- Բ. ԱՍՏ-ն համարվում է լյարդային վնասման մասին վկայող ավելի սպեցիֆիկ մարկեր, քան ԱԼՏ-ն
- Գ. կրծքով սնուցումը չի բարձրացնում հեպատիտ B-ի փոխանցման ռիսկը
- Դ. հեպատիտ C ինֆեկցված մայրերից ծննդած երեխաների մոտ անհրաժեշտ է 18 ամսական հասակում ստուգել շիճուկային հակա-HCV հակամարմինների մակարդակը

**11. Քրոնիկ հեպատիտների պատճառ կարող են հանդիսանալ նշվածներից բոլորը, բացի.**

- A. Վիրուսային հեպատիտ C**
- B. Վիլսոնի հիվանդություն**
- C. Վիրուսային հեպատիտ A**
- D. α1-անտիտրիպսինի անբավարարություն**

**12. Նեպատիտ A-ի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.**

- A. Վարակը փոխանցվում է ֆեկալ-օրալ ճանապարհով**
- B. հեպատիտ A-ի վիրուսը երբեք չի բերում քրոնիկ հեպատիտի առաջացման**
- C. բուժման ընթացքում անհրաժեշտ է հետևել հատուկ սննդակարգի (սեղան N5)**
- D. հիվանդները հոսպիտալացման կարիք հազվադեպ են ունենում**

**13. Սուր հեպատիտ B վիրուսային վարակի մասին կարող է վկայել շիճուկում հետևյալ մարկերների հայտնաբերումը, բացի՝**

- A. HBsAg**
- B. հակա-HBsAg հակամարմիններ**
- C. հակա HBc հակամարմիններ**
- D. IgM հակա-HBc հակամարմիններ**

**14. Մանկական առևտոիմուն հեպատիտների 1-ին տիպին բնորոշ են բոլոր նշվածները, բացի.**

- A. Կազմում է առևտոիմուն հեպատիտների բոլոր դեպքերի 2/3-ը**
- B. գերակշռում է իգական սեռի շրջանում**
- C. շիճուկում հայտնաբերվում են հարթ մկանային և/կամ հակակորիզային հակամարմիններ**
- D. շիճուկում հայտնաբերվում են միկրոսոմալ հակամարմիններ լյարդի և երիկամների հանդեպ**

**15. Վիլսոնի հիվանդության վերաբերյալ նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.**

- A. բնորոշ է շիճուկային ցերուլոպլազմինի ցածր մակարդակ**
- B. ախտորոշման «ոսկե ստանդարտը» գենետիկ հետազոտությունն է**
- C. բնորոշ է պղնձի ցածր մակարդակ մեզում**
- D. ախտորոշման «ոսկե ստանդարտը» լյարդում պղնձի ցածր կոնցենտրացիան է**

# ՊԱՐԶ ՀԵՐՊԵՏՈՒ

## Ներածություն

Ներկայումս հայտնաբերված են ավելի քան 80 հերպեսային վիրուսներ, որոնցից ութը հայտնի են որպես մարդու պաթոգեններ: Պարզ (հասարակ) հերպեսի (Herpes simplex) վիրուսները (ՊՀՎ) պատկանում են ամենուրեք տարածված Herpesviridae վիրուսների ընտանիքին, որի կազմի մեջ մտնում են. պարզ հերպես վիրուս 1-ը (ՊՀՎ-1), պարզ հերպես վիրուս 2-ը (ՊՀՎ-2), ջրծաղիկի և գտներող հերպեսի վիրուսը (varicella zoster virus), ցիտոմեգալովիրուսը, Epstein-Barr վիրուսը (ինֆեկցիոն մոնոնուկլեոզի հարուցչը), հերպես վիրուս 6-ը (Roseolovirus), հերպես վիրուս 7-ը (Roseolovirus), ինչպես նաև Կապոշի (Kaposi) սարկոմայի հետ առնչվող 8-րդ հերպես վիրուսը (KSHV): ՊՀՎ-ի հարուցած հիվանդություններն առավել տարածված ինֆեկցիաներից են, որոնցով վարակված են մեծահասակների գրեթե 60-90%-ը: Դրանք անբուժելի են և օրգանիզմում գոյատևում են ամբողջ կյանքի ընթացքում, հաճախ՝ լատենտ ձևով:

## Տարածվածությունը

ՊՀՎ-1-ը մարդու հերպեսային ոչ գենիտալ վարակների մեջ մասի պատճառն է, ընդգրելով աշխարհի բնակչության 45-ից 98%-ը: ՊՀՎ-1-ի տարածվածությունը տարբեր է՝ կապված տարիքի, սեռի, աշխարհագրական վայրի, ռասայի և սոցիալ-տնտեսական վիճակի հետ, ընդ որում, բնակչության սերոպոզիտիվությունը առավել մեծ տոկոս է կազմում զարգացող երկրներում:

Աշխարհագրական վայրերի մեջ մասում ՊՀՎ-1-ի տարածվածությունը ավելի մեծ է, քան ՊՀՎ-2-ինը: ՊՀՎ-2-ը առավելապես սեռական ճանապարհով փոխանցվող վարակ է, ուստի հազվադեպ է հանդիպում երեխաների շրջանում, թեև կարող է փոխանցվել մորից նորածնին՝ հղիության ընթացքում:

Սակայն վերջերս կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ ՊՀՎ-2-ի տարածվածությունը աճել է 30%-ով և այն ՊՀՎ-1-ի պես հաճախ է հայտնաբերվում էքստրագենիտալ շրջանում, բացառությամբ՝ օրոֆացիալ շրջանի: Միևնույն ժա-

մանակ, ՊՀՎ-1-ը սկսել է ավելի հաճախ հայտնաբերվել անոգենիտալ շրջանում, որի ախտահարումը նախկինում առավելապես կապվում էր ՊՀՎ-2-ի հետ:

## Վիրուսի փոխանցումը և կենսաբանական հատկությունները

Վարակը հիմնականում փոխանցվում է ակտիվ ախտահարված լորձաթաղանթների կամ մաշկի հետ շփումից, կամ էլ ՊՀՎ-ի ակտիվ վարակ ունեցող անհատի լորձային արտազատուկների միջոցով: Վիրուսը հեշտությամբ փոխանցվում է թքի միջոցով և կարող է կարծ ժամանակ գոյատևել օրգանիզմից դուրս, որը հնարավորություն է տալիս փոխանցել վիրուսը մաշկի կամ լորձաթաղանթի հետ կոնտակտից հետո՝ որոշ ժամանակ անց: ՊՀՎ-ն կարող է փոխանցվել ռեսպիրատոր կաթիլներով, ինչպես նաև, վիրուս արտազատող ասիմպտոմատիկ անձանց մաշկալորձային արտազատուկների հետ շփումից: Վիրուսի արտազատումը բնորոշվում է նրանով, որ, չնայած կլինիկական նշանների բացակայությանը, վիրուսն առկա է մաշկի մակերեսին՝ քիչներից դուրս:

Առաջնային կամ սկզբնական ՊՀՎ վարակների հնկութացիոն շրջանը մոտ 4 օր է, սակայն կարող է տատանվել 2-ից մինչև 12 օր: Դրան հաջորդում է վիրուսային ակտիվ սփոման շրջանը, որը տևում է մեկից մինչև մի քանի շաբաթ: Յիշանդմերի մեջ մասը, որոնք ծեռք են բերում ՊՀՎ-ի առաջնային վարակ ասիմպտոմատիկ են: Յետևաբար, վիրուսը կարող է տևական փոխանցվել հնկութացիոն և վիրուսային սփոման շրջաններում՝ առանց ակտիվ մաշկային ախտահարումների առկայության:

ՊՀՎ-ն համարվում է նվազ ագրեսիվ, քան մարդու մյուս հերպեսային վիրուսները: Վիրուսի առաջնային ներգործությունից հետո, հաճախ այն թափանցում է էպիթելային քիշների մեջ, որտեղ տեղի է ունենում ներքջային ռեպլիկացիա: Անկախ կլինիկական ախտանիշներից, առաջնային վարակից հետո, վիրուսը զգայական նյարդերի պերիաքստնալ թաղանթով, ռետրոգրադ ճանապարհով բարձրանում է դեպի օրգա-

նիզմի նյարդային համակարգի եռվորյակ, պարանոցային, գոտկասրբանային կամ ավտոնոմ հանգույցները: Այստեղ վիրուսը սկսում է բազմանալ, մեկուսանում է օրգանիզմի իմունային համակարգից և ոչ ակտիվ՝ «քնած» վիճակում, գոյատևում է մարդու ամբողջ կյանքի ընթացքում: **ԴՀՎ-1-ը** լատենտ վիճակում ամենահաճախը պահպանվում է եռվորյակ, իսկ **ԴՀՎ-2-ը՝** սրբանային հանգույցներում:

Օրգանիզմում վիրուսի քրոնիկ և լատենտ գոյատևումը հանգեցնում է կրկնվող սրացումների՝ պայմանավորված վիրուսի վերակտիվացումով, ինչը մեծացնում է վիրուսի փոխանցման հնարավորությունները: Այսպիսով, **ԴՀՎ-ի** կրկնությունը ռեինֆեկցիա չէ, այլ վիրուսի պարբերական վերակտիվացման արդյունք:

Սրացումը կարող է լինել առանց թվայցայլ պատճառի, այնուամենայնիվ, հայտնի են վիրուսը «նիրիհած» վիճակից ակտիվացնող բազմատեսակ գրգիշներ. սրբեսնու գերիզմածությունը, արևային ճաշագայթման ազդեցությունը, դաշտանը, տենդը, իմունոսուլարեսիան (օր. կորտիկոսուլերիների ընդունումը) և այլն: Եթե վիրուսը վերակտիվանում է նշված ներքին կամ արտաքին գրգիշներից, այն կարող է «ուղևորվել» զգայական նյարդի երկայնքով և վերակտիվանալ մաշկալորձային նույն շրջանում, որտեղ և տեղի է ունեցել սկզբնական վարակի թափանցումը: Սովորաբար դրսնորումներն ի հայտ են գալիս ավելի կարծ գաղտնի շրջանից հետո, քան առաջնային վարակի դեպքում, և վիրուսի սփռումը տևում է ընդամենը 3-4 օր: Հետաքրքրական է, որ հերպեսի ռեակտիվացիաներ կարող են տեղի ունենալ վարակված անձի կյանքի հետագա օրերի մոտ 1%-ի ընթացքում:

### **Կլինիկական արտահայտությունները**

**ԴՀՎ-ի** կլինիկական արտահայտությունները ներառում են ասիմպտոմատիկ վարակից մինչև մաշկալորձային այնպիսի ախտահարումներ, ինչպիսիք են շրթունքային հերպեսը, հերպեսային գինգիվոստոմատիտը, կերատոկոնյունկտիվիտը, մատնաշունչը, էկզեման, գլադիատորային հերպեսը, գենիտալ հերպեսը, ինչպես նաև նյարդային համակարգի այնպիսի բարդություններ,

ինչպիսիք են հերպեսային էնցեֆալիտը և մենինգիտը\*: Վերջինները հատկապես լուրջ սպառնալիք են ներկայացնում իմունոսուլարեսիայով հիվանդների համար:

### **Շրունքային հերպես** (*Herpes Labialis*)

Շրունքային հերպեսը **ԴՀՎ-1-ի** ամենահաճախ հանդիպող կլինիկական արտահայտություններից է: Քանի որ սկզբնական վարակը հիմնականում ասիմպտոմատիկ է և չի նկատվում, ապա երեսամերի և երիտասարդների մոտ բերանի և դեմքի շրջանի հերպեսային վարակի առաջնային նշանները պայմանավորված են առավելապես վիրուսի ռեակտիվացիայի և վարակի կրկնության հետ:

Չնայած բնակչության շրջանում **ԴՀՎ-1-ի** լայն տարածմանը, սերոպոգիտիվ հիվանդների միայն 15-40%-ն է երբեւ ունենում մաշկալորձային ախտահարման կրկնություններ: Վերջիններիս հաճախականության վրա որոշակի ազդեցություն են ունենում անհատի ժառանգական զգայունությունը, ինունային վիճակը, տարիքը, վարակի անատոմիական տեղակայումը և վիրուսի ներառությունը: Ընդհանուր առնամբ, 35 տարեկանից հետո վիրուսի ռեակտիվացիաների հաճախականությունը գնալով նվազում է:

Յամենատած առաջնային վարակի հետ, կրկնությունների էպիզոդները բնորոշվում են կարճ տևողությունով և մեղմ ընթացքով՝ նվազագույն ընդհանուր երևույթների ընդգրկումով: Այնուամենայնիվ, հաճախակի սրացումներն ուղեկցվում են զգալի հիվանդացությունով, անհարմարությունով, ցավով, կոսմետիկ տիաճությունով և հոգեբանական դիսթրեսով: Դիմային հերպեսի կրկնությունները կարող են ունենալ լայն ընդգրկումներ՝ շրունքները, այտերը, քիթը և քթի միջնապատը՝ հիվանդին պատճառելով նվազագույն դիսկոնֆորտից մինչև զգալի տիաճություններ: Շրունքային հերպեսի կրկնությունները 3 անգամ ավելի հաճախ են լինում ջերմող, քան առանց տեղի հիվանդների շրջանում: Չնայած հիվանդների մեծ մասը տարեկան ունենում է ոչ ավելի, քան 2 սրացումներ, նրանց 5-10%-ը կարող են ունենալ տարեկան ամենաքիչը 6 սրացումներ:

\* Նորածնային հերպեսի վերաբերյալ տեղեկություններ չեն ներկայացվելու

Բնորոշ դեպքերում ՊՀՎ-ն ախտահարում է շրթունքի կարմիր երիզի արտաքին և հարակից մաշկի շրջանը: Յիշանդների շուրջ 60%-ի մոտ շրթունքային հերպեսի կրկնությանը նախորդում են որոշակի պրոդրոմալ ախտանիշներ, որոնք արտահայտվում են ապագա ախտահարման տեղում ցավով, այրոցի, քրոյի կամ ծակծկոցի գգացումով: Պրոդրոմալ երևույթները տևում են մոտ 6 ժամ և պայմանավորված են տվյալ մաշկալորձային դերնատումը նյարդավորող գգայական նյարդի ծայրամասում վիրուսի վաղ ռեպիլացիայով: Կրկնությունների գրեթե մեկ քառորդը ընդհատվում են հենց այդ պրոդրոմալ շրջանում: Սակայն, դասական դեպքերում, 24 ժամվա ընթացքում հայտնվում են բազմաթիվ բշտիկներ, որոնք միաձուլվում են և պատռվում՝ առաջացնելով արագորեն կեղևակալվող մակերեսային էրոզիաներ: Սրացման առաջին օրերին ցավը և դիսկոմֆորտն արտահայտված են, այնուամենայնիվ, վերքերը լավանում են առանց սպիացման՝ երկու շաբաթից պակաս ժամկետում: Ընդ որում, անգամ վերքերի լավացումից հետո, վիրուսի տարածումը շարունակվում է ևս 3-5 օր: Կեղևակալված օջախները հաճախ շփոթում են ստաֆիլոկոկային կամ ստրեպտոկոկային ինպետիգոյի հետ, չնայած, իրոք կարող է լինել երկրորդային վարակ՝ վերոհիշյալ միկրոբներով, որն արտահայտվում է դասական հերպեսային օջախների վրա մեղրագույն կեղևներով:

### Հերպեսային գինգիվոստոմատիտ (Herpetic gingivostomatitis)

Հերպեսային գինգիվոստոմատիտով սովորաբար հիվանդանում են 1-ից 5 տարեկան երեխաները: Այն արտահայտվում է բազմաթիվ կլորավիւն մակերեսային էրոզիաներով, որոնք հաճախ տեղակայվում են քիմքին, լեզվին և լնդերին: Չնայած որ, և ՊՀՎ-1-ը, և ՊՀՎ-2-ը կարող են հարուցել բերանի առաջնային ախտահարումներ, այնուամենայնիվ, այդ ախտահարումների գրեթե բոլոր դեպքերը պայմանավորված են ՊՀՎ-1-ով: Վարակի դեպքերի մեծ մասը սուբկլինիկական ընթացք ունեն: Յիշանդները կարող են ունենալ բնորոշ պրոդրոմալ շրջան, որին հաջորդում են դասական բշտիկախոցային ախտահարումները: Երեխաների մոտ վարակն արտահայտվում է լնդերի տարածուն երիթենայով և այտուցով, թքահոսությունով, գարշահոտ շնչառությունով, պարանոցա-

յին և ենթածնոտային լիմֆադենոպաթիայով, տենդով, դիսֆագիայով և թուլությունով: Բերանի ցավուտ ախտահարումների հետևանքով երեխան կարող է բավարար չափով հեղուկներ չընդունել, որի պատճառով հերպեսային գինգիվոստոմատիտը հաճախ բարդանում է ջրազրկումով: Ուստի, ցավազրկումը և բավարար ռեհիդրատացիան հիվանդության վարման հիմնական մոտեցումներ են:

Երբեմն կարիք է լինում հերպեսային գինգիվոստոմատիտը դիֆերենցել աֆտող ստոմատիտից: Վերջինիս դեպքում բացակայում են պրոդրոմալ և բշտիկային փուլերը և համակարգային ախտանիշները:

### Հերպեսային կերատոկոնյունկտիվիտ (Herpetic keratoconjunctivitis)

Աչքի հերպեսային վարակը աշխարհում կուրության դեպքերի երկրորդ հաճախ հանդիպող պատճառներից է, ընդ որում, գերակշռող հարուցիչը ՊՀՎ-1-ն է: Թարախային կոնյունկտիվիտի հետ մեկտեղ, եղջերաթաղանթի վրա հայտնվում են բշտիկներ, որոնք վերածվում են էրոզիաների կամ խոցերի: Հերպեսային էթիոլոգիայի կասկածի դեպքում խորհուրդ է տրվում հիվանդին շուտափույթ ուղարկել ակնաբույժի մոտ՝ կանխելու համար այնպիսի բարդությունները, ինչպիսիք են երկրորդային բակտերիալ վարակը, անդարձելի սպիացումը և տեսողության կորուստը:

### Հերպեսային մատնաշունչ (Herpetic whitlow)

Հերպեսային մատնաշունչն արտահայտվում է ձեռքի դիստալ ֆալանգի փափուկ մասի խորը տեղակայված այտուցով, կարմրությունով և բշտիկախոցային ախտահարումով: Այս վարակն առավել հաճախ հանդիպում է այն հիվանդների մոտ, որոնք ունեն առաջնային օրալ կամ գենիտալ հերպես, ինչպես նաև բուժսպասարկման բնագավառի աշխատողների մոտ: Երեխաներից սովորաբար հիվանդանում են 1-3 տարեկանները, ընդ որում, այդ տարիքում մատնաշունչի պատճառը մատթերանային կոնտակտն է: Դեռահասների և մեծահասակների մոտ հերպեսային մատնաշունչի գերակշռող պատճառը ՊՀՎ-2-ն է, որը փոխանցվում է ավելի հաճախ մատթենիտալ կոնտակտի միջոցով:

Հերպեսային մատնաշունչն անհրաժեշտ է տարբերակել սովորական մատնաշունչից, այրվածքային վնասումից և խմատիգոյից:

Այն լավանում է ինքնուրույն, և սովորաբար վիրաբուժական միջամտության կարիք չի առաջանում: Արտահայտված դեպքերում օգտակար կարող է լինել հակավիրուսային բուժումը: Մատների հերպեսային վարակը սովորաբար լավանում է 3-4 շաբաթների ընթացքում, սակայն կարող է կրկնվել:

### Հերպեսային էկզեմա (Eczema herpeticum)

Հերպեսային էկզեման կամ Կապոշի-Չուլիուսբերգի ջրծաղիկանան ցանավորումը ծանր, գեներալիզացված հերպեսային վարակ է, որը գլխավորապես ախտահարում է ատոպիկ դերմատիտով հիվանդ երեխաներին կամ երիտասարդներին: Տեղային կամ համակարգային կորուկուսատերոիդներով բուժվող, ինչպես նաև ՄԻԱՎ վարակով հիվանդները նույնպես բարձր ռիսկի խնճում են: Հերպեսային էկզեման սովորաբար սկսվում է կրկնվող շրոթունքային հերպեսի տեղում և արագորեն տարածվում է դեպի շրջակա մաշկը, հատկապես՝ դեմքի, ուսերի և իրանի: Մաշկի բազմաթիվ ախտահարումներն ուղեկցվում են նաև ընդհանուր ախտանիշներով՝ տենդով, գլխացավով և թուլությունով: Յնարավոր դիարեան, բրոնխոպանսոնիան և ուղեղային ախտահարումները խոսում են հիվանդության ծանր ընթացքի մասին: Յիշավանդությունը կարող է տևել 10 օրից ավել: ՊՀՎ-1-ը այս կլինիկական ընթացքի հիմնական պատճառն է՝ չնայած այն կարող է պայմանավորված լինել նաև ՊՀՎ-2-ով և գոտևորող հերպեսի վիրուսով: Հերպեսային էկզեմայի ռեցիդիվներ հազարեալ են պատահում:

### Գլադիատորային հերպես (Herpes gladiatorum)

Գլադիատորային հերպեսն առաջանում է կոնտակտային սպորտաձևերին (ըմբշամարտ, բռնցքամարտ և այլն) մասնակցող անձանց մոտ: Այն առավել հաճախ ախտահարում է մարմնի շփվող մասերը՝ դեմքը, ականջները, վերին վերջույթները և պարանոցը, ընդորում, հարուցիչը հիմնականում ՊՀՎ-1-ն է: Վարակի փոխանցումը կանխելու համար պետք է արգելել հիվանդ մարզիկի մասնակցությունը մարզումներին, մինչև բշտիկների

լրիվ կեղևակալումը կամ կեղևիկների լրիվ չորացումը՝ քանի դեռ բարձր է վարակիչ լինելու հավանականությունը:

### Հերպեսային էնցեֆալիտ և մենինգիտ (Herpes encephalitis)

Հերպեսային էնցեֆալիտը և մենինգիտը կարող են լինել ՊՀՎ-ի ինչպես առաջնային, այնպես էլ կրկնվող վարակի արտահայտություններ: Յիշավանդները կարող են ունենալ կենտրոնական նյարդային համակարգի ոչ սպեցիֆիկ ախտանիշներ՝ գիտակցության խանգարումներ, ցնցումներ, տեղային նյարդաբանական սինպոններ, անձնային փոփոխություններ և այլն:

### Գենիտալ հերպես (Genital Herpes, Herpes Genitalis)

Գենիտալ հերպեսի ամենահաճախ և հիմնական պատճառը ՊՀՎ-2-ն է, սակայն, գնալով ավելի հաճախ են համոդիպում գենիտալ շրջանի առաջնային վարակներ՝ պայմանավորված ՊՀՎ-1-ով:

Գենիտալ հերպեսով սովորաբար հիվանդանում են դեռահասները և մեծահասակները: Վարակն սկսվում է սեռական օրգանների և շերի շրջանում փոքր չափերի խնբավորված բշտիկների հայտնվելով, որոնք 2-4 օրերի ընթացքում վերածվում են խոցային մակերեսների: Յիշավանդները կարող են գանգատվել ցավոտ միզարձակումից, ունենալ ռեգիննալ լինֆադենոպաթիա: Ախտահարումները լավանում են 2-6 շաբաթների ընթացքում, սակայն վիրուսի սփռումը կարող է տևել ավելի երկար: Սկզբնական վարակից հետո վիրուսը լատենտ վիճակում մնում է ռեգիննալ զգայական կամ ավտոնոմ հանգույցներում՝ մինչև հետագա հնարավոր ռեակտիվացիան:

### Լաբորատոր ախտորոշումը

Ներկայումս հայտնի լաբորատոր ախտորոշման մեթոդներից են կուլտուրայից վիրուսի անջատումը, բշտիկի պարունակության ցիտոլոգիական քսուրը՝ Tzanck-ի պրեպարացիան, ուղղակի ֆլուորեսցենտային հակամարմիններով թեստը, վիրուսի հայտնաբերումը PCR եղանակով և սերոլոգիական հետազոտությունները:

Լաբորատոր ախտորոշման «ոսկե ստանդարտ» է համարվում **Վիրուսային կուլ-**

**Սուլրան:** Վերջինս կարելի է կիրառել միայն ակտիվ ցանքսի ժամանակ՝ բշտիկի հիմքից քերուկ վերցնելով: Մեթոդի թանկարժեքությունը և արդյունքների ստացման հապաղումը թույլ չի տալիս այն կիրառել առօրյա բժշկական պրակտիկայում:

**Tzanck-ի քսուքը \*** արագ և ոչ թանկարժեք հետազոտություն է, որի հիմքում ընկած է **ՊՆՎ-ով** վարակված՝ հսկա և բազմակորիզավոր, այսպես կոչված Tzanck-ի քշիչների հայտնաբերումը: Սակայն թեսուի զգայունությունը և սպեցիֆիկությունը մեծապես տատանողական են, և այն ներկայումս հազվադեպ է կիրառվում:

**Ուղղակի ֆլուորեսցենտային հակամարմիններով թեստավորումը** իմունոիդստոքիմիական մեթոդ է, որն իրականացվում է սպեցիֆիկ հակամարմինների միջոցով՝ վիրուսային անտիգենները հայտնաբերելու համար: Այս մեթոդը կարելի է կիրառել **ՊՆՎ-ի** վարակի սերոտիպը որոշելու համար: Թեստն արագ է, զգայուն, ոչ թանկ և հաճախ կիրառվում է կլինիկական կասկածը հիմնավորելու և սերոտիպը որոշելու նպատակով, սակայն այն պակաս ճշգրիտ է հին և ապաքինվող ախտահարումների դեպքում:

**Պոլիմերազային շղթայական ռեակցիան (PCR)** վիրուսային ԴՆԹ-ի որոշման մեթոդ է, որի հիմքում ընկած է վիրուսի ԴՆԹ-ի բազմակի պատճենումը կամ ամպլիֆիկացիան: Այն համարվում է հերպեսի ախտորոշման ամենաճշգրիտ թեստը, և կարող է «պատասխանել» կա՝ **ՊՆՎ-1** կամ **ՊՆՎ-2** վերցված նմուշում, թե ոչ, անգամ՝ վիրուսի չնչին քանակության դեպքում: Այս մեթոդը հատկապես օգտակար է հերպեսային ենցեֆալիտի կասկածով հիվանդների ողնութեղային հեղուկում **ՊՆՎ-ի** հայտնաբերման համար:

**Սերոլոգիական հետազոտություններն ուղղված են հայտնաբերելու հակա-ՊՆՎ իմունոգլոբուլինները:** Այս եղանակով ստացված արդյունքները ճիշտ գնահատելու դեպքում կարելի է հաստատել առաջնային վարակը: Արյան շիճուկը վերցվում է վարակի սուր շրջանում՝ ախտանիշների սկզբնական 3-4 օրերին և մի քանի շաբաթ անց՝ լավացման շրջանում: Քանի որ սուր վարակի դեպքում օրգանիզմի հումորալ

պատասխանը հապաղում է, սուր շրջանում վերցված նմուշում հակամարմինները բացակայում են, սակայն դրանք աստիճանաբար հայտնվում են և հաջորդող մի քանի շաբաթների ընթացքում դրանց քանակը շատանում է և պահպանվում ամբողջ կյանքի ընթացքում: **ՊՆՎ-ի նկատմամբ** հակամարմինների բացակայությունը սուր շրջանում վերցրած շիճուկում, ինչպես նաև, **ՊՆՎ-սպեցիֆիկ IgM** հակամարմինների հայտնվելը և/կամ IgG հակամարմինների աճը ապաքինման փուլում, վճռորոշ կերպով խոսում է առաջնային հերպեսային վարակի մասին: Այն դեպքում, եթե սուր շրջանում վերցված շիճուկում առկա են IgG հակամարմիններ, իսկ հետո հայտնվում են սպեցիֆիկ IgM հակամարմիններ, ինչպես նաև ապաքինման շրջանում IgG-ի տիտրը աճում է, ապա կարելի է ախտորոշել կրկնվող հերպեսային վարակ: Հետևաբար, ախտորոշելիս կարևոր է սուր շրջանում վերցված շիճուկում որոշել երկու տեսակի հակամարմիններն էլ՝ IgM և IgG: Սակայն կրկնվող վարակի դեպքում սերոլոգիական անալիզի օգտակարությունը հարցականի տակ է դրվում, քանի որ կրկնվող վարակով հիվանդների քիչ տոկոսն են ցուցաբերում հակամարմինների տիտրի աճ:

Պետք է նշել, որ ներկայումս լաբորատորիաներում առաջարկվող հերպեսային հակամարմինների որոշման շատ թեստեր չեն կարող տարբերել **ՊՆՎ-1-ը** **ՊՆՎ-2-ից**: Հերպեսի՝ սերոլոգիական եղանակով ախտորոշման նորագույն թեստերը, որոնք վերջին տարիներին սկսել են կիրառվել աշխարհի մի շարք երկրներում, շատ ավելի ճշգրիտ են: Դրանք հայտնաբերում են հակամարմիններ վիրուսի մի սպիտակուցի նկատմամբ, որով տարբերվում են **ՊՆՎ-1-ը** և **ՊՆՎ-2-ը**: Այդ սպիտակուցը գլիկոպրոտեին G-ն է («gG»), և այս թեստերը երբեմն անվանվում են գլիկոպրոտեին G սպեցիֆիկ թեստեր:

## Բուժումը

Պարզ հերպեսային վարակի բուժումը վերջնականապես չի վերացնում վիրուսը օրգանիզմից, սակայն այն կարող է մեղմացնել հիվանդության կլինիկական ընթացքը, նվազեցնել ծանրությունը, կանխել բարդությունները, ինչպես նաև պակասեցնել կրկնութ-

\* Arnault Tzanck (1886-1954) - ֆրանսիացի բժիշկ

յունների հաճախականությունը: Ժամանակակից բուժական մոտեցումները իրենց մեջ ներառում են ախտանիշները թերևացնող միջոցներ և օրալ, պարենտերալ և տեղային հակավիրուսային դեղամիջոցներ:

### Ախտանիշային բուժում

Դիմնական նպատակը ցավի մեղմացումն է և ռեհիդրատացիան: Սրանք հատկապես կարևոր են այն երեխաների համար, որոնք ախտահարված են շրբունքային հերպեսով և գինզիվոստոմատիտով, քանի որ, ցավի պատճառով երեխան կարող է հրաժարվել ուտելուց կամ խմելուց, որը կհանգեցնի ջրազրկման: Այս դեպքում օգտակար կարող են լինել տեղային ցավազրկողները և օրալ կամ ներերակային ռեհիդրատացիան:

### Օրալ հակավիրուսային դեղամիջոցներ

Առաջին գժի օրալ հակավիրուսային դեղամիջոցը ացիկլովիրն է: Այլընտրանքային դեղամիջոցներից են վալացիկլովիրը և ֆամցիկլովիրը, չնայած նրանց կիրառումը երեխաների շրջանում դեռևս չի հաստատված: Առաջարկվող դոզան է 1200 մգ/օրը (մաքսիմում՝ 80 մգ/կգ օրական) 7-10 օր տևողությամբ՝ առաջնային վարակի դեպքում և 5 օր՝ կրկնության դեպքում:

Շրունքային հերպեսի բուժումը օրալ ացիկլովիրով կարող է արդյունավետ լինել, եթե սկսվում է պրոդրումալ ախտանիշների առաջին երկու օրերի ընթացքում: Այն հիվանդներին, որոնք ունենում են տարեկան 6 և ավելի սրացումներ, կարելի է նշանակել քրոնիկ սուպերսիվ թերապիա՝ օրալ հակավիրուսային դեղամիջոցով, որը կարող է նվազեցնել սրացումների հաճախականությունը:

### Պարենտերալ հակավիրուսային դեղամիջոցներ

Ացիկլովիրի ներերակային թերապիան նախատեսված է պոտենցիալ ծանր բարդությունների դեպքերում: Նման իրավիճակներ են համարվում ՊՀՎ վարակով նորածինները, մաշկալորձային վարակը՝ թուլացած իմունային համակարգով հիվանդների մոտ, հերպեսային էկզեման և հերպեսային մենինգենցեֆալիտը: Առաջարկվող դոզան է օրը 60 մգ/կգ, 14 օր՝ նորածինների համար և 21 օր՝ հերպեսային էնցեֆալիտի դեպքում:

Պետք է հիշել, որ ացիկլովիրը կարող է ունենալ նեֆրոտոքսիկ ազդեցություն, ուստի կարևոր է դեղաչափը հաշվարկելիս հիմնվել հիեալական քաշի վրա, ինչպես նաև ուշադրություն դարձնել հիվանդի հիդրատացիային, հսկել միզարտադրությունը և շիճուկային կրեատինինի ցուցանիշները:

### Տեղային հակավիրուսային դեղամիջոցներ

Չնայած շատ բժիշկներ նշանակում են ացիկլովիրի քսուքը որպես տեղային հակավիրուսային դեղամիջոց, այն խորհուրդ չի տրվում նշանակել նորմալ իմունիտետով հիվանդներին, քանի որ, նման բուժումը չի նվազեցնում վարակի տևողությունը և ծանրությունը: Տեղային հակավիրուսային բուժումը խորհուրդ է տրվում միայն իմունային համակարգի խնդիրներ ունեցող հիվանդներին, որոնց մոտ բուժումն արագացնում է ախտահարված շրջանի լավացումը:

Հերպեսային կերատոկոնյունկտիվիտի բուժումը ներառում է ինչպես տեղային հակավիրուսային, այնպես էլ օրալ հակավիրուսային դեղամիջոցներ:

### Գրականություն.

- **Fatahzadeh M, Schwartz RA - Human herpes simplex virus infections: epidemiology, pathogenesis, symptomatology, diagnosis, and management.**  
- J Am Acad Dermatol, vol 57, 2007, pp 737-763.
- **Chayavichitsilp P, Buckwalter J, Andrew C., Krakowski A. Friedlander Sh.- Herpes Simplex.**  
- Pediatrics in Review, Vol.30, No.4, 2009, pp 119-130.
- **Andreae M- How to recognize and manage herpes simplex virus type 1 infections.**  
- Contemporary Pediatrics, vol 21 (2), 2004, pp 41-60.
- **Arjen F. Nikkels and Gerald E. Pierard - Treatment of Mucocutaneous Presentations of Herpes Simplex Virus Infections.**  
- J Am Acad Dermatol, vol 3 (7), 2002, pp 475-487.
- **Herpes Diagnosis.** <http://www.herpessdiagnosis.com/index.html>

## Հարցեր ինքնագնահատման համար.

- 16. Մարդու պաթոգեն համարվող հերպեսային վիրուսների Herpesviridae ընտանիքի մեջ մտնում են հետևյալ վիրուսները, բացի.**
- A.** ցիտոմեգալովիրուսը
  - B.** ջրծաղիկի վիրուսը
  - C.** Epstein-Barr վիրուսը
  - D.** ադենովիրուսը
- 17. Մարդու օրգանիզմում պարզ հերպեսի վիրուսը առաջնային վարակից հետո լատենտ վիճակում գոյատևում է.**
- A.** մաշկի մեջ
  - B.** լորձաթաղանթում
  - C.** նյարդային հանգույցում
  - D.** արյան լեյկոցիտներում
- 18. Պարզ հերպեսի վիրուսի ակտիվացման և սրացման գրգռիչներից են համարվում.**
- A.** սթրեսը և գերհոգնածությունը
  - B.** կանանց մոտ՝ դաշտանը
  - C.** արևային ճառագայթումը
  - D.** վերը նշված բոլորը
- 19. Ո՞ր նյարդային հանգույցում է ամենահաճախը լատենտ վիճակում պահպանվում պարզ հերպես վիրուսի առաջին տիպը (ՊՆՎ-1).**
- A.** գոտկասրբանային
  - B.** եռվորյակ
  - C.** պարանոցային
  - D.** ողնուղեղային
- 20. Հերպեսային գինզիվոստոմատիտի բուժման իիմնական մոտեցումն է.**
- A.** անտիբակտերիալ և հակասնկային դեղամիջոցների կիրառումը
  - B.** բերանի խոռոչի լորձաթաղանթի մշակումը
  - C.** ացիկլովիրի քսուքի կիրառումը
  - D.** ցավազրկումը և բավարար ռեհիդրատացիան
- 21. Ներկայումս պարզ հերպես վիրուսի լաբորատոր ախտորոշման ամենաճշգրիտ և գործնական մեթոդն է համարվում.**
- A.** ուղղակի ֆլուորեսցենտային հակամարմիններով թեստը
  - B.** Tzanck-ի քսուքը
  - C.** պոլիմերազային շղթայական ռեակցիան (PCR)
  - D.** սերոլոգիական հետազոտությունները
- 22. Հերպեսի բուժման առաջին օժի օրալ հակավիրուսային դեղամիջոց է համարվում.**
- A.** ացիկլովիրը
  - B.** ֆամցիկլովիրը
  - C.** վալացիկլովիրը
  - D.** գանցիկլովիրը

# ԷՍՏԵՐՈԲԻՈԶ

## Պատճառագիտություն

Ենտերոբիոզի հարուցիչը նեմատոդների (կլոր որդեր) ներկայացուցիչը *Enterobius vermicularis*-ն է (սրատուտ), նախկինում այն անվանվել է *Oxyuris vermicularis*: Սրատուտը փոքր, բարակ, սպիտակ գույնի որդ է: Եգերն ունեն 8-13 մմ երկարություն, իսկ արուները՝ 2-5 մմ: *Enterobius vermicularis*-ը պարտադիր մակարույթ է և հանդիպում է միայն մարդու մոտ: Եվրոպայում, Աֆրիկայում և Ասիայում նկարագրվել է նաև սրատուտի մեկ այլ տեսակ՝ *Enterobius gregorii*, որն իր մորֆոլոգիայով, կենսական ցիկլով, ինչպես նաև կլինիկական դրսնորումներով և բուժումով նման է *Enterobius vermicularis*-ին:

## Դամաճարակաբանություն

Սրատուտները հայտնաբերվում են ամենուրեք, առավելապես՝ մեղմ կլիմայական գոտիներում: Թեև ենտերոբիոզով կարող են վարակվել բոլորը, սակայն ավելի հաճախ այն հանդիպում է երեխաների, հատկապես մանկապարտեզ և դպրոց հաճախողների շրջանում, իեշտությամբ փոխանցվում է հաստատության այլ այցելուներին, ինչպես նաև՝ տան անդամներին: Աշխարհում մոտ 209 մլն մարդ, իսկ երեխաների ավելի քան 30%-ը վարակված են սրատուտով: Վարակի տարածվածության մեջ դեր չունեն սեռը, ազգային պատկանելիությունը և սոցիալ-տնտեսական վիճակը:


## Կենսական ցիկլը / Փոխանցումը

*E. vermicularis*-ն ունի պարզունակ կենսական ցիկլ, որն ամբողջությամբ ընթանում է վարակված մարդու օրգանիզմում (Սկար 1): Ցիկլը սկսվում է պերիանալ ծալքերում բեղմնավորված հասուն էգ որդի ձվադրումով ①: Պերիանալ շրջանը քորելու և կոնտամինացված ձեռքերով ձվերը ունի բերան փոխանցելու միջոցով տեղի է ունենում ինքնավարակում ②: Անձից անձ փոխանցումը կարող է կատարվել վարակված մարդու կոնտամինացված ձեռքերին դիպած սնունդ օգտագործելիս կամ կոնտամինացված հագուստի, ինչպես նաև անկողնային սպիտակեղենի գործածումից: Վարակուն կարող է տեղի ունենալ նաև ձվերով կոնտամինացված կենցաղային առարկաների, օր.՝ վարագույրների, գորգերի մակերես-

ների հետ շփումից: Բացի այդ, սրատուտի ձվերը կարող են տարածվել օդով՝ ներշնչման և կուլ տալու միջոցով:

Վարակվելուց հետո, մոտավորապես 6 ժամվա ընթացքում, բարակ աղիներում ձվերից դուրս են գալիս թրթուրները ③: Յասունացած որդերը սովորաբար բնակվում են զստաղու տերմինալ հատվածում, կույր աղիքում, որդանման ելունում և պրօքսիմալ վերել հաստ աղում, ընդ որում, որդերը անկաշկանդ գոյատևում են աղիքի լուսանցքում ④: Չուգավորումից հետո էգ սրատուտը գաղթում է դեպի ուղիղ աղիք և, եթե այն չի արտամղվում կղազատման ընթացքում, տեղաշարժվում է դեպի շերի շրջանը (հաճախ գիշերային ժամերին): Ճվադրուկ միջինը 11000 ձու: Բարենպաստ պայմաններում ձվերում գտնվող թրթուրները զարգանում են (ձվերը դարնում են վարակիչ) 4-6 ժամ հետո և կարող են շրջակա միջավայրում ննալ վարակիչ միջև 3 շաբաթ ①: Նոր դուրս եկած թրթուրները կարող են տեղաշարժվել հակառակ ուղղությամբ՝ հետանցքի մաշկածալքերից դեպի ուղիղ աղիք (ռետրոինֆեկցիա), սակայն հայտնի չէ, թե ինչ հաճախականությամբ է այս երևույթը տեղի ունենում:


Ձվերը կուլ տալու պահից մինչև հասուն էգ որդի ձվադրումն ընկած ժամանակահատվածը մոտավորապես 1 ամիս է: Սեռահասուն որդի կյանքի տևողությունը 2-3 ամիս է:



Սկար 1. Սրատուտի կենսական ցիկլը

## Կլինիկական դրսևորումներ

Ենտերոբիոզը հաճախ կլինիկորեն չի արտահայտվում: Առավել տարածված ախտանիշը հետանցքի շրջանի քորն է, որը հիմնականում առաջանում է գիշերը և պայմանավորված է պերիանալ մաշկածալքերում գտնվող որդերի ու ձվերի նկատմամբ առաջացած բորբոքային ռեակցիայով: Քորելու հետևանքով եղունգների տակ կուտակված ձվերը հեշտացնում են ինքնավարակումը կամ անձից անձ վարակի փոխանցումը, իսկ մաշկի լուրջ քերծվածքների դեպքում կարող է գումարվել երկրորդային բակտերիալ վարակ: Գիշերային քորը հաճախ դառնում է քնի խանգարման պատճառ: Ենտերոբիոզի այլ ախտանիշներից են անորեքսիան և գրգռվածությունը: Դազվադեպ, երբ որդերի քանակը շատ է, կարող են ի հայտ գալ փորացավեր, սրտխառնոց և փսխում, ընդ որում, որովայնի ցավը երեմն այնքան ուժեղ է լինում, որ նմանվում է սուր ապենիցիտին: Սրատուտներով վարակված երեխաների մոտ կարող է նկատվել նաև գիշերամիզություն: Դիվանդները հաճախ ունենում են շերի շրջանի, վոլվայի քերծվածքներ կամ էրիթրեմա՝ չնայած վարակը կարող է ընթանալ նաև առանց այս ախտանիշների: Նկարագրված են էղողնոֆիլային ենտերոկոլիտի դեպքեր, թեև պերիֆերիկ էղողնոֆիլիա սովորաբար չի նկատվում:



Նկար 2.

Հետազոտությունը կատարվում է առավոտյան՝ մինչև դեֆեկացիան և լվացվելը: Առարկայական ապակուն ավելացնում են նատրիումի հիդրօքսիդ կամ տոլուեն: Սրատուտի ձվերը 25 x 50 միկրոն չափերի են, մեկ կողմից ասիմետրիկ տափակ են և բնորոշ լորածն տեսք ունեն (Նկար 3): Թեստի զգայունությունը բարձրացնելու նպատակով (մոտ 90%) առաջարկվում է այն կատարել 3 իրար հաջորդող օրերի ընթացքում: Որպես ախտորոշման այլընտրանքային միջոց կատարվում է նաև հետանցքից վերցված քսուքի հետազոտումը: Քանի որ սրատուտի ձվերը կղանքի մեջ սովորաբար չեն արտազատվում (վարակված անձանց միայն 5%-ի կղանքում կան ձվեր), ապա ձվերի և որդերի վերաբերյալ կղանքի քննություն ցուցված չէ:

Երբեմն սրատուտները կարող են հետանցքի շրջանից տեղափոխվել անսովոր տեղեր և հարակից օրգանների հիվանդության պատճառ դառնալ: Դարակից հիվանդության առավել հաճախ տեղակայումը իզական միզասեռական ուղին է: Այստեղ կարող է առաջանալ արտաքին սեռական օրգանների քոր (pruritus vulvæ): Դազվադեպ սրատուտները կարող են թափանցել միզուկ կամ հեշտոց և առաջացնել ուրետրիտ, վագինիտ կամ սալպինգիտ: Սրատուտների հետ կապված՝ նկարագրված են ատիքրներում, որովայնամզում, ինչպես նաև շերի մաշկում արսցեսի և գրանուլոմայի ձևավորման դեպքեր, որոնք խիստ հազվադեպ են հանդիպում: Սրատուտներ հայտնաբերվել են որդաննան ելունի հյուսվածքում ապենիդիկոտոմիաներից և դիահերձումներից հետո, սակայն նրանք չեն համարվում սուր ապենիցիտի պատճառ:

## Լաբորատոր ախտորոշում

Ենտերոբիոզն ախտորոշվում է պերիանալ շրջանից կազուն ժապավենի կամ քսուքի միջոցով վերցված նմուշում ձվերի միկրոսկոպիկ հայտնաբերմանը:

Ժապավենային թեստը («Աքուչ-թեստ») կատարվում է հետևյալ ձևով: առարկայական ապակու եզրին ամրացված թափանցիկ, կազուն, լայն (5 սմ) ժապավենը հայում են հետանցքի շրջանին, այնուհետև այն տեղադրում են առարկայական ապակու վրա (Նկար 2):

Դազվադեպ ձվերը կարող են հանկարծակի հայտնաբերվել մեզում կամ հեշտոցի քսուքում:

Ենտերոբիոզն ախտորոշվում է նաև այն դեպքում, երբ պերիանալ շրջանում կամ անոռեկտալ, կամ հեշտոցային հետազոտության ժամանակ հայտնաբերվում են հասուն որդեր: Քանի որ սրատուտների կենսական ցիկլը չունի արտաաղիքային փուլ, էղողնոֆիլիա և հակամարմնային պատասխան չի զարգանում, ուստի շնարանական հետազոտություններ չեն կատարվում:



Նկար 3. Սրատուտի ձու

## Բուժումը

Հակահելմինթային բուժում ցուցված է նոտերոբիոզ ախտորոշումով բոլոր հիվանդներին: Մեկ դեղաչափի ընդունումը բավարար է հասուն որդերին վերացնելու համար, սակայն այն չի ոչնչացնում ձվերը կամ թրուրները: Նետևաբար, խորհուրդ է տրվում 2 շաբաթ անց ընդունել երկրորդ դեղաչափի՝ ձվերից նոր դուրս եկած որդերին ոչնչացնելու համար: Երկու դեղաչափով բուժումն ապահովում է բուժման ավելի քան 90% արդյունավետություն: Քանի որ սրատուսները շատ հեշտությամբ են փոխանցվում մի անձից մյուսին, ապա կարևոր է, որ բուժվեն ընտանիքի բոլոր անդամները, եթե տանը սրատուսով վարակված երեխա կա:

Ենտերոբիոզի բուժման համար առաջնահերթ խորհուրդ է տրվում կիրառել մեթենդազոլը կամ ալբենդազոլը:

### Առաջին ընտրության դեղամիջոցներ

**Մեթենդազոլ.** 2 տ.-ից մեծ երեխաների և մեծահասակների համար՝ 100 մգ միանվագ, բերանացի ընդունմամբ, կարելի է կրկնել 2 շաբաթից:

Հիվանդները լավ են տանում մեթենդազոլի և ալբենդազոլի ընդունումը, քանի որ վերջիններս ունեն նվազագույն համակարգային ներծծում, սակայն հակացուցված են հիդներին:

### Երկրորդ ընտրության դեղամիջոցներ

**Պիրանտել.** 11 մգ/կգ միանվագ դեղաչափով, բերանացի ընդունմամբ, խորհուրդ է տրվում կրկնել 2 շաբաթ հետո, կարելի է խմել կարով կամ մրգահյութով:

**Իվերմեկտին.** արդյունավետ է սրատուսի դեմ, թեև այն սովորաբար չի կիրառվուն այս նպատակով:

Մինչև 2 տարեկան երեխաների բուժման նպատակով նշված դեղամիջոցներից և ոչ մեկի ազդեցությունը լայնորեն ուսումնասիրված չէ: Պերիանալ շրջանի քորի սիմպտոմատիկ բուժման նպատակով կարելի է կիրառել քորը հաճախացնող քսուք կամ կրեմ:

## Բուժումը հղիության ընթացքում

Ենտերոբիոզով հղիների բուժումը վերապահված է միայն արտահայտված ախտանիշներով հիվանդների համար, ընդ որում, այդ նպատակով նախընտրելի է ախրանտելը:

## Պրոգնոզը

Ենտերոբիոզը գերազանց պրոզմոզ ունի, սակայն կրկնակի վարակումը հաճախ դիտվող երևույթ է: Կրկնավարակները բուժվում են նույն դեղամիջոցներով՝ ինչպես սկզբնական վարակը:

## Կանխարգելումը

- Զեօքերի լվանալը, հատկապես՝ կերակուր պատրաստելուց կամ ընդունելուց առաջ և եղունգների կտրելը նվազեցնում են ինքնավարակումը և վարակի փոխանցումը տան անդամներին:
- Վարակված անձանց խորհուրդ է տրվում առավոտյան լոգանք ընդունել. Վերջինս զգալիորեն նվազեցնում է սրատուսի ձվերի քանակը:
- Երեխաներին անհրաժեշտ է սովորեցնել մատները բերանը չտանել, եղունգները չկրծել և չքորել:
- Վարակված անձի անկողնային սպիտակեղենը, ներքնազգեստը պետք է անհապաղ լվանալ և պետք չէ անկողինը թափ տալ՝ սրատուսի ձվերի տարածումից խուսափելու համար:
- Ավանդաբար խորհուրդ է տրվում արդուկել լվացած սպիտակեղենն ու ներքնազգեստը ձվերի բարձր ջերմաստիճանի միջոցով ոչնչացման համար:
- Քանի որ ձվերը կարող են 20 օր վարակիչ մնալ տան փոշու մեջ, խորհուրդ է տրվում փոշեկուլով մաքրել գորգերը և կատարել հատակի խոնավ մաքրում:
- Բուժում ստանալուց և հիգիենիկ միջոցառումներն իրականացնելուց հետո (լոգանք, եղունգների կտրում) երեխան կարող է հաճախել դպրոց:

## Գրականություն

- **Centers for Disease Control and Prevention, Division of Parasitic Diseases and Malaria (DPDM) - Enterobiasis.**  
available at <http://www.dpd.cdc.gov/dpdx/html/enterobiasis.htm>
- **Wayne Wolfram - Enterobiasis, Updated: Aug 19, 2011.**  
available at <http://emedicine.medscape.com/article/997814-overview>
- **Best Practice BMJ - Pinworm infection.**  
available at <http://bestpractice.bmjjournals.com/bestpractice/monograph/443.html>. Updated: Jun 28, 2011
- **Corry Jeb Kucik, Gary L. Martin and Brett V. Sortor - Common Intestinal Parasites.**  
- Am Family Physician, vol 69, 2004, pp 1161-8
- **Karin Leder and Peter F Weller - Enterobiasis and trichuriasis.**  
available at <http://www.uptodate.com>

## Դարցեր ինքնագնահատման համար.

### 23. Ստորև նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.

- Ա.** սրատուտի ձվերը կարող են տարածվել օդով
- Բ.** վարակումը կարող է տեղի ունենալ կենցաղային առարկաների հետ շփումից
- Գ.** վարակի փոխանցումը կարող է կատարվել կոնտամինացված սնունդ օգտագործելիս
- Դ.** նշված բոլորը

### 24. Ենտերոբիոզի ժամանակ կարող են հանդիպել բոլոր նշված նշաններն ու ախտանիշները, բացի.

- Ա.** փորացավեր
- Բ.** էնկոպրեզ
- Գ.** անորեքսիա
- Դ.** գիշերամիզություն

### 25. Նշված եղանակներից ո՞րն է կիրառվում ենտերոբիոզի ախտորոշման համար.

- Ա.** ձվերի և որդերի հայտնաբերում կղանքում
- Բ.** պերիանալ շրջանից կպչուն ժապավենի կամ քսուքի միջոցով վերցված նմուշում ձվերի միկրոսկոպիկ հայտնաբերում
- Գ.** Enterobius vermicularis-ի հանդեպ հականարմինների հայտնաբերում արյան մեջ
- Դ.** նշված բոլորը

### 26. Ստորև ներկայացված պնդումներից ո՞րը չի համապատասխանում իրականությանը.

- Ա.** Էնտերոբիոզը գերազանց պրոգնոզ ունի, իսկ կրկնակի վարակումը հազվադեպ հանդիպող երևույթ է
- Բ.** Էնտերոբիոզի՝ երկու դեղաչափով բուժումն ապահովում է բուժման ավելի քան 90% արդյունավետություն
- Գ.** Եթե տանը սրատուտով վարակված երեխա կա, անհրաժեշտ է բուժել ընտանիքի բոլոր անդամներին
- Դ.** հակահելմինթային բուժում ցուցված է էնտերոբիոզ ախտորոշումով բոլոր հիվանդներին

### 27. Էնտերոբիոզի բուժման առաջին ընտրության դեղամիջոցն է.

- Ա.** պիրանտելը
- Բ.** իվերմեկտինը
- Գ.** մերենդազոլը
- Դ.** ֆուրազոլիդոնը